ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2020 – 2025)

Խմբագրական խորհուրդ՝ **Ա. Հ. Մակարյան** (նախագահ), **Գ.Կ.Ավետիսյան**

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշներ.
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Իջևան, 2025, 91 էջ:

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների արդյունքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ 6

Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց 22

Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում 41

Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ 57

Բնագավառ 5. Գիտություն և նորարարություն 69

Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն 77

Բնագավառ 7. Որակի ապահովում 85

Բնագավառ 8. Հասարակական պատասխանատվություն 89

Նախաբան

Սույն վերլուծությունը կատարվել է 2024-25 ուստարվա ավարտին՝ ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացման արդյունքների վերլուծության շրջանակներում՝ Մասնաճյուղի համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության՝ ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև տարեկան և եռամյա հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի և հաջորդ SWOT (ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների) վերլուծությունների համար:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ-երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ-ի նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի մասնաճյուղի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի ներկայացման առանցքային ցուցանիշներ: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 8 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորարարություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն
7. Որակի ապահովում
8. Հասարակական պատասխանատվություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային և «առողջական» վիճակի ցուցանիշները: Կատարվել է ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2020-2025 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած **78** ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՆԱԳԱՎԱՌ 1.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

Յուցանիշ 1.1.	Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)
Յուցանիշ 1.2.	Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.3.	Դիմորդների բաշխումն ըստ մարզերի
Յուցանիշ 1.4.	Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)
Յուցանիշ 1.5.	ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 1.6.	Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)
Յուցանիշ 1.7.	Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.8.	Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
Յուցանիշ 1.9.	Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին
Յուցանիշ 1.10.	Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)
Յուցանիշ 1.11.	Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.12.	Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.13.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.14.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.15.	Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Յուցանիշ 1.1. Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)

Յուցանիշ 1.1	2020	2021	2022	2023	2024
Դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների	439	394	398	355	350
Բակալավրիատ (առկա)	**266**	**242**	**263**	**216**	**217**
Հումանիտար գիտություններ	129	127	143	88	103
Բնական գիտություններ	40	41	28	25	21
Տնտեսագիտական	76	58	74	73	62
Կիրառական արվեստ	21	16	18	30	31
Բակալավրիատ (հեռակա)	**135**	**135**	**121**	**105**	**102**
Հումանիտար գիտություններ		68	69	39	36
Բնական գիտություններ		0	0	0	0
Տնտեսագիտական		67	52	66	66
Մագիստրատուրա	**38**	**17**	**14**	**34**	**31**
Հումանիտար գիտություններ(Դպրոց. մանկ.և մեթոդիկա)	38	17	14	20	21
Տնտեսագիտական(Գործարար վարչարարություն)				14	10

2024/25 ուստարվա ընդունելության գործընթացում գրանցված դիմորդների թիվը կազմել է 350, որը վերջին հինգ տարվա մեջ ամենացածր ցուցանիշն է և չնչին տարբերությամբ զիջում է 2023/24 ուստարվա (355) արդյունքին:: Ըստ ֆակուլտետների՝ առկա ուսուցմամբ դիմորդների թվի աճ նախորդ չորս տարիների համեմատ գրանցվել է միայն կիրառական արվեստի ֆակուլտետում, տնտեսագիտական ֆակուլտետում աճ գրանցվել է 2021/2022 ուստարվա դիմորդների համեմատությամբ, հումանիտար գիտությունների ֆակուլտետում աճ գրանցվել է 2023/2024 ուստարվա դիմորդների համեմատությամբ, իսկ բնական գիտությունների ֆակուլտետներում գրանցվել է նախորդ չորս տարիների համեմատ դիմորդների թվի ամենացածր ցուցանիշը: Հումանիտար գիտությունների ֆակուլտետում դիմորդների ցածր ցուցանիշը պայմանավորված է «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերով դիմորդների թվի նվազմամբ, իսկ բնական գիտությունների ֆակուլտետում այն հանգամանքով, որ մարզի շատ շրջանավարտներ դիմում են Երևանի բուհեր՝ տեխնիկական և ինժեներական կրթություն ստանալու համար, ինչպես նաև ընդունելության 2 մրցութային առարկաներով, այդ թվում «Ֆիզիկա» առարկայով, որի իմացության մակարդակը մարզի դպրոցներում այնքան էլ լավ չէ:

Հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրով հումանիտար գիտությունների ֆակուլտետում գրանցվել է նախորդ տարիների համեմատությամբ ամենացածր ցուցանիշը, իսկ տնտեսագիտության ֆակուլտետում պահպանվել է նախորդ տարվա ցուցանիշը, աճ գրանցվել է միայն 2022/2023 ուստարվա համեմատությամբ: Մագիստրատուրայի «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով դիմորդների թիվը գերազանցել է 2021/2022, 2022/2023 և 2023/2024 ուստարիների դիմորդների ցուցանիշը, իսկ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով դիմորդների թիվը նվազել է և 2023/2024 ուստարվա համեմատությամբ:

Բակալավրի առկա ուսուցմամբ նախընտրելի են համարվել հիմնականում «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցմամբ նախընտրելի կրթական ծրագրերն են «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը:

2022 թ-ից կատարվել է մագիստրատուրայի ընդունելություն՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով:





Ցուցանիշ 1.2. Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

Ցուցանիշ 1.2	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր դիմորդների թիվը	14543	13120	13573	13314	14332
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա)	266	242	263	216	217
ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը	1.83%	1.84%	1.94%	1.62%	1.51%

Գնահատման և թեստավորման կենտրոնի հրապարակած տեղեկատվության համաձայն 2024-2025 ուստարվա միասնական քննությունների հիմնական փուլին հայտագրվել է 14332 դիմորդ: Վերջին 5 տարվա տվյալներով ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների բաժնեմասը դիմորդների ընդհանուր համակազմում մոտավորապես 1.5%-2% է:





Յուցանիշ 1.3. Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

Յուցանիշ 1.3	2020		2021		2022		2023		2024	
Երևան	**7**	**2.63%**	2	0.83%	0	0.00%	1	0.46%	0	0.00%
Կոտայք	1	0.38%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	1	0.46%
Արմավիր	1	0.38%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Գեղարքունիք	2	0.75%	6	2.48%	1	0.38%	3	1.39%	3	1.38%
Շիրակ	1	0.38%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Արարատ	1	0.38%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	1	0.46%
Լոռի	1	0.38%	1	0.41%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Արագածոտն	1	0.38%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Սյունիք	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Տավուշ	**251**	**94.36%**	**233**	**96.28%**	**262**	**99.6%**	**212**	**98.1%**	**212**	**97.7%**
Վայոց ձոր	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Այլ երկրներից	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Ընդամենը	266		242		263		216		217	

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2024թ. դիմորդների ընդհանուր թվի **97.7%-ը** Տավուշի մարզից են: Տոկոսային ցուցանիշը պայմանավորված է մարզում Երևանի պետական համալսարանի մասնաճյուղն ունենալու, որակյալ կրթություն ապահովելու, ինչպես նաև տարածաշրջանում բարձր հեղինակություն ունենալու հանգամանքով /հիմք՝ Արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները/: Հայաստանի հանրապետության այլ մարզերից ԵՊՀ ԻՄ դիմորդների տոկոսային ցածր ցուցանիշը պայմանավորված է դեպի Երևան ձգտումով, Երևանում և ՀՀ այլ մարզերում գործող բուհերի առկայությամբ, նաև այն հանգամանքով, որ Մասնաճյուղը չունի ուսանողական հանրակացարան, իսկ մարզում վարձով տրվող բնակարանների վարձաչափերը բավականին բարձր են:





Յուցանիշ 1.4. Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)

Յուցանիշ 1.4	2020	2021	2022	2023	2024
Բակալավրիատ	**212**	**192**	**185**	**161**	**182**
Անվճար	43	**44**	44	45	45
Վճարովի	169	**148**	141	116	137
Մագիստրատուրա	**25**	**15**	**14**	**32**	**26**
Անվճար	0	0	0	0	0
Վճարովի	25	15	14	32	26

2024-2025 ուստարվա ընդունելությամբ մասնաճյուղն ունեցել է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) 45 տեղ: Ընդունելության արդյունքներով պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումամբ հատկացված տեղերը լրացվել են:

Վճարովի հիմունքներով մասնաճյուղն ունեցել է 255 տեղ, որի զգալի մասը մնացել է թափուր՝ պայմանավորված նախ դիմորդների թվաքանակով (դիմորդները կազմել են հատկացված տեղերի 72,3%-ը), ապա նաև ընդունելության միասնական քննությունները չհաղթահարելու հանգամանքով (հաղթահարել է դիմորդների 83,8%-ը):



Ցուցանիշ 1.5. ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

Ցուցանիշ 1.5	2020	2021	2022	2023	2024
Կենտրոնացված ընդունելության ծավալը	13131	8083	9729	9147	9418
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	212	192	185	161	182
ԵՊՀ ԻՄ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում (%)	**1.61**	**2.38**	**1.90**	**1.76**	**1.93**

2020 թվականին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակազմում կազմել է **1.61%:** Գրանցվել է նաև ընդունվածների թվի էական աճ (46-ով), որը պայմանավորված է դիմորդների ընդհանուր ծավալի ավելացմամբ՝ նախորդ ուստարիների համեմատությամբ, նաև համա-վարակային իրավիճակից կախված հիմնականում մեկ քննություն հանձնելու հանգամանքով:

2021թ.-ին ՀՀ-ում ընդունվածների թիվը էապես նվազել է (նշենք, որ ցուցանիշում ներկայացված է միայն առաջին փուլի արդյունքները) ԿԳՄՍ նախարարության կողմից ընդունելության կարգում փոփոխություններ մտցնելու պատճառով: 2021թ.-ին կիրառվել է «մեկ բուհ, մեկ մասնագիտություն» սկզբունքը, ինչը նշանակում է՝ դիմորդն առաջին փուլում հայտագրում է մեկ բուհ և իր նախընտրած մեկ մասնագիտությունը: Այս սահմանափակումն, իհարկե, անդրադարձել է Մասնաճյուղի վրա, բայց ոչ էական, որովհետև դիմորդներն, այնուամենայնիվ, կողմնորոշված են դիմում Մասնաճյուղ և ԵՊՀ ԻՄ բաժնեմասն ընդունելության ընդհանուր ծավալում գերազանցել է նախորդ տարիների ցուցանիշը:

2022 թվականին Մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակազմում **(1.90%)** գերազանցել է 2020 թվականի ցուցանիշը, բայց նվազել է 2021 թվականի համեմատությամբ, որովհետև ավելացել է կենտրոնացված ընդունելության ծավալը:

2023 թվականին Մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակազմում **(1.76%)** գերազանցել է 2020 թվականի ցուցանիշը, բայց նվազել է 2021, 2022 թվականների համեմատությամբ:

2024 թվականին Մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակազմում **(1.93%)** գերազանցել է 2020, 2022 և 2023 թվականների ցուցանիշները, բայց նվազել է 2021 թվականի համեմատությամբ: Այնուամենայնիվ մասնաճյուղն ունի ընդունելության գրեթե կայուն թիվ (160-ից 200 ընդունված):



Ցուցանիշ 1.6. Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

Ցուցանիշ 1.6	2020	2021	2022	2023	2024
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	266	242	263	216	217
Ընդունվածների թիվը	212	192	185	161	182
Մրցութային ցուցանիշը (բակ.)	**1.25**	**1.26**	**1.42**	**1.34**	**1.19**
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	38	17	14	34	31
Ընդունվածների թիվը	25	15	14	32	26
Մրցութային ցուցանիշը (բակ.)	**1.52**	**1.13**	**1.0**	**1.06**	**1.19**

2024-2025 ուստարում բակալավրիատի առկա ուսուցման ընդունելության համար մրցութային ցուցանիշը կազմել է 1.19: Հարաբերակցության նվազումը ցույց է տալիս, որ ընդունվածների թիվը աճել է նախորդ տարիների համեմատությամբ: 2024թ. դիմորդներն ավելի լավ են հաղթահարել ընդունելության քննությունները քան նախորդ չորս տարիներին: 2024թ. մասնաճյուղ ընդունվել է դիմորդների 83.9%-ը, մինչդեռ 2020/2021 ուստարում ընդունվել է դիմորդների 79.6%-ը, 2021/2022 ուստարում՝ 79.3%-ը, 2022/2023 ուստարում՝ 70.3%-ը, 2023/2024 ուստարում՝ 74.5%-ը:

Մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելության համար ամենաբարձր մրցակցությունը եղել է 2020թ., երբ ցուցանիշը կազմել է 1.52: 2022թ. մրցակցություն գրեթե չի եղել (դիմորդների և ընդունվածների թիվը նույնն է՝ 1.0): 2024թ-ին հարաբերակցությունը բարելավվել է՝ հասնելով 1.19–ի, ինչը վկայում է որոշակի մրցակցության վերականգնման մասին:





Յուցանիշ 1.7. Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Յուցանիշ 1.7	2020	2021	2022	2023	2024
Դիմորդների թիվը	135	135	121	**105**	102
Ընդունվածների թիվը	88	113	45	**32**	23
Մրցութային ցուցանիշ (Հարաբերությունը)	**1.53**	**1.19**	**2.69**	**3.28**	**4.43**
Նախապատրաստական դասընթացներից ընդունվածների թիվը			0	0	0
Հեռակա ուսուցման համակարգ ընդունվածների ընդհանուր թիվը			**59**	**64**	**49**

Հեռակա ուսուցման համակարգում 2024թ.-ի ընդունելության մրցութային ցուցանիշը վերջին չորս տարիների համեմատ ամենավատ ցուցանիշն է՝ 4.43: Այն ցույց է տալիս, որ ընդունվածները չորս անգամ քիչ են դիմորդների թվից: Ակնհայտ է, որ դա պայմանավորված է հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմորդների ոչ բավարար պատրաստվածությամբ, և նրանց գերակշիռ մասը դժվարացել է հաղթահարել գնահատականների նվազագույն շեմը, որի արդյունքում մասնաճյուղ ընդունվել է դիմորդների միայն 22.5%-ը:

Մյուս երկու ցուցանիշները ներառվել են Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման պահանջներով: Նշենք, որ 2024-2025 ուստարում մասնաճյուղում նախապատրաստական դասընթացներ չեն իրականացվել դիմողներ չլինելու պատճառով: Իսկ հեռակա ուսուցման համակարգ ընդունվածների թիվը համալրվել է քոլեջներից մասնաճյուղ դիմած դիմորդների հաշվին:





Յուցանիշ 1.8. Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Յուցանիշ 1.8	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա)	**0**	**0**	**0**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**0**	**0**	**0**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (մագիստրատուրա)	0	0	0	0	0
Ընդունվածների թիվը	0	0	0	0	0
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա)	**0**	**0**	**0**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**0**	**0**	**0**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը վերջին տարիներին օտարերկրյա դիմորդներ չի ունենում: Օտարերկրյա ուսանողների համակազմ ունենալու համար հարկավոր է ակտիվացնել աշխատանքներն այլ երկրներից /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ, իրականացնել հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:

Ցուցանիշ 1.9. Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

Ցուցանիշ 1.9	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը	439	394	398	355	350
ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը	273	228	197	149	219
Հարաբերությունը (դիմորդներ)	62.2%	57.9%	49.5%	42.0%	62.6%
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	325	320	244	225	231
ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը	223	207	151	125	179
Հարաբերությունը (ընդունվածներ)	68.6%	64.7%	61.9%	55.6%	77.5%

2024/2025 ուստարվա ընդունելության արդյունքներով դիմորդների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմել է **62.6%:** Ընդունվածների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմում է **77.5%,** որը պայմանավորված է միասնական քննությունների պահանջներին իգական սեռի դիմորդների բավարար պատրաստվածությամբ: Եվ պետք է նշել, որ իգական սեռի ընդունվածների բաժնեմասը իգական սեռի դիմորդների թվում 2022թ.-ին կազմել է 151/197= **76.6%**, 2023-ին՝ **83.9%,** իսկ 2024-ին՝ **81.7%,** այսինքն հաշվետու տարում իգական սեռի դիմորդներից 40-ը (նախորդ տարի՝ 24-ը) չի հաղթահարել ընդունելության շեմը:

Ընդունելության արդյունքներով իգական սեռի ցուցանիշը պայմանավորված է նաև մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող կրթական ծրագրերի նախընտրությամբ: Առկա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրը 2024/2025 ուստարում նախընտրել են իգական սեռի դիմորդները:





Ցուցանիշ 1. 10. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.10	2020	2021	2022	2023	2024
Ընդունելության ընդհանուր ծավալը	**325**	**320**	**244**	**225**	**231**
Բակալավրիատ (առկա, վճարովի)	169	148	141	116	132
Բակալավրիատ (հեռակա)	88	**113**	**45**	32	23
Մագիստրատուրա (վճարովի)	25	15	14	32	26
Ընդամենը վճարովի	**282**	**276**	**200**	**180**	**181**
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	**86.8**	**86.3**	**82.0**	**80.0**	**78.3**

2024-2025 ուստարվա ընդունելության արդյունքներով վճարովի համակարգով ընդունվածների հաշվեկշիռն ընդունելության ընդհանուր ծավալում կազմել է **78.3%:** Ըստ հինգ տարիների արդյունքների՝ ցուցանիշը տատանվում է 78-ից 87%-ի շրջանակներում: Ընդունելության ընդհանուր ծավալում անվճար տեղերի քանակը հիմնականում կայուն է (չի փոփոխվում), իսկ վճարովի համակարգի հաշվեկշիռը ընդունելության ծավալում 2024թ.-ին նվազել է նախորդ չորս տարիների համեմատ բակալավրի թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցմամբ: Ակնհայտ է, որ այդ արդյունքը պայմանավորված է ընդունելության քննություն-ներին դիմորդների ցածր պատրաստվածությամբ: Նշենք, որ 2022 թվականից հեռակա ուսուցման ընդունելության քննությունները կազմակերպվում և անց են կացվում **Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից:**

Ընդունելության արդյունքներով վճարովի համակարգին հատկացված տեղերի զգալի մասը մնացել է թափուր:





Ցուցանիշ 1.11. Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)

Ցուցանիշ 1.11	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական ուսանողական համակազմը	1288	1186	**1145**	**1182**	**1096**
Բակալավրիատ	**563**	**562**	**636**	**663**	**619**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	**288**	**290**	337	345	319
Բնական գիտությունների ֆակուլտետ	90	79	78	85	71
Տնտեսագիտության ֆակուլտետ	**119**	**130**	154	153	142
Կիրառական արվեստի ֆակուլտետ	66	63	67	80	87
Օտարերկրյա ուս. համակազմը	0	0	0	0	0
Հեռակա ուսուցում	**700**	**611**	**495**	**487**	**443**
Մագիստրատուրա	25	**13**	**14**	**32**	**34**

2024/25 ուստարում հիմնական ուսանողական համակազմը նվազել է նախորդ չորս տարիների ցուցանիշի համեմատությամբ: Ըստ ֆակուլտետների, նախորդ չորս տարիների ցուցանիշի համեմատությամբ, հիմնական ուսանողական համակազմը նվազել է միայն բնական գիտությունների ֆակուլտետում, հումանիտար գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետների ցուցանիշը նվազել է 2022/2023, 2023/2024 ուստարիների ցուցանիշի համեմատությամբ, բայց գերազանցել է 2020/2021, 2021/2022 ուստարիների ցուցանիշը, կիրառական արվեստի ֆակուլտետը գերազանցել է նախորդ չորս տարիների ցուցանիշը: Վերջին տարիներին հեռակա ուսուցման համակարգում ուսանողների թվի նվազումը պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգում մասնաճյուղի շրջանավարտների թվի համեմատությամբ ընդունելության արդյունքում քիչ ընդունվելու հանգամանքով, նաև բնագիտական ուղղությամբ հեռակա ուսուցման համակարգում վերջին չորս տարիներին 3 (Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Բնապահպանություն և բնօգտագործում, Քարտեզագրություն և կադաստրային գործ) և առկա ուսուցմամբ 2 (Բնապահպանություն և բնօգտագործում, Քարտեզագրություն և կադաստրային գործ) կրթական ծրագրերով ընդունելություն չկազմակերպելու փաստով: Պետք է փաստել, որ առկա ուսուցման ուսանողների թիվն ավելացել է պայմանավորված հումանիտար գիտությունների ֆակուլտետ, տնտեսագիտության ֆակուլտետ և կիրառական արվեստի ֆակուլտետ ընդունվածների թվի աճով, ինչպես նաև հումանիտար գիտությունների ֆակուլտետում նոր 2 կրթական ծրագիր ներդնելու հանգամանքով և որոշ կրթական ծրագրերի շրջանակներում ընդունվածների թվի ավելացմամբ:





Յուցանիշ 1.12. Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

Յուցանիշ 1.12	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը	1288	**1186**	**1145**	**1182**	**1096**
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	0	0	0	0	0
Բակալավրիատ	0	0	0	0	0
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**0**	**0**	**0**	**0**	**0**

Մասնաճյուղը վերջին ուստարիներին օտարերկրյա ուսանողներ չունի: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքների համալիր ծրագիր, որը կնպաստի բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա (հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից) դիմորդներ ներգրավելու ուղղությամբ:

Ցուցանիշ 1.13. Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

Ցուցանիշ 1.13	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական համակազմը	1288	1186	1145	1182	1096
Հեռակա ուսուցման համակազմը	700	611	495	487	443
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**54.3**	**51.5**	**43.2**	**41.2**	**40.4**

Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների թվաքանակը 2024/2025 ուստարում կազմել է հիմնական ուսանողական համակազմի **40.4%-ը**: Հեռակա ուսուցման ուսանողների թվաքանակը ընդհանուր համակազմում վերջին տարիներին նվազում է և՛ դիմորդների, և՛ ընդունվածների թվաքանակի նվազման արդյունքում, ինչպես նաև բնագիտական ուղղությամբ հեռակա ուսուցման համակարգում ընդունելություն չկազմակերպելու հանգամանքով (տես ցուցանիշ 1.11):





Ցուցանիշ 1.14. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.14	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական համակազմ	**1288**	**1186**	**1145**	**1182**	**1096**
Բակալավրիատ (առկա)	409	401	470	488	445
Բակալավրիատ (հեռակա)	700	611	480	487	443
Մագիստրատուրա	25	13	25	32	34
Ընդամենը վճարովի	**1134**	**1025**	**975**	**1007**	**922**
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**88.0**	**86.4**	**85.2**	**85.2**	**84.1**

2024-2025 ուստարվա վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում նվազել է նախորդ ուստարիների ցուցանիշի համեմատությամբ և վերջին 4 տարիների համար կազմում է՝ **84%-88%:** Ցուցանիշը վերջին տարիներին իջել է, ինչը պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգ ընդունելության ծավալի նվազմամբ:





Ցուցանիշ 1.15. Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.15	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական համակազմ	**1288**	**1186**	**1145**	**1182**	**1096**
Այլ բուհեր տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը	**2**	**5**	**4**	**6**	**3**
Այդ թվում՝ առկա ուսուցում	2	4	2	3	1
հեռակա ուսուցում	-	1	2	3	2
Այլ բուհերից տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը	**42**	**33**	**37**	**42**	30
Այդ թվում՝ առկա ուսուցում	**-**	1	**1**	**14**	**0**
հեռակա ուսուցում	**10**	3	**5**	**17**	6
ՄՄՈՒՀ-երից տեղափոխված՝ հեռակա ուսուցում	**32**	**29**	**31**	**11**	**24**

2024/2025 ուստարում մասնաճյուղից այլ բուհեր տեղափոխվել է 3 ուսանող (1 ուսանող առկա ուսուցմամբ, 2-ը՝ հեռակա ուսուցմամբ), որը համեմատաբար ցածր ցուցանիշ է՝ նախորդ երեք տարիների համեմատությամբ: Սա վկայում է, որ ուսանողների արտահոսքը դեպի այլ բուհեր փոքրածավալ է և միտում ունի նվազելու:

Միաժամանակ, այլ բուհերից տեղափոխված ուսանողների թիվը կազմել է 30, որը ցածր ցուցանիշ է նախորդ տարիների համեմատությամբ: Նրանց մեծ մասը ՄՄՈՒՀ-երից հեռակա ուսուցման համակարգ տեղափոխված ուսանողներ են (80%), իսկ առկա ուսուցման շարժ գրանցված չէ:

2024/2025 ուստարում ՄՄՈՒՀ-երից տեղափոխված ուսանողների թիվը աճել է՝ հասնելով 24-ի (նախորդ տարվա 11-ի փոխարեն), ինչը վկայում է մասնավորապես միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից ուսանողների ներհոսքի վերականգնման մասին:

2024/2025 ուսումնական տարում ուսանողների շարժը (մուտք և ելք) ընդհանուր առմամբ մնացել է կայուն, ներհոսքը (30 ուսանող) զգալիորեն գերազանցել է արտահոսքին (3 ուսանող), ինչը դրական է բուհի ընդհանուր թվաքանակի կայունացման տեսանկյունից:



ԲՆԱԳԱՎԱՌ 2.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ցուցանիշ 2.1.	Անցումն առաջինից երկրորդ կուրս
Ցուցանիշ 2.2.	Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների
Ցուցանիշ 2.3.	Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի)
Ցուցանիշ 2.3.1.	Դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)
Ցուցանիշ 2.4.	Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
Ցուցանիշ 2.5.	Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից)
Ցուցանիշ 2.6.	Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
Ցուցանիշ 2.7.	Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը
Ցուցանիշ 2.8.	Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը
Ցուցանիշ 2.9.	Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
Ցուցանիշ 2.10.	Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը
Ցուցանիշ 2.11.	Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
Ցուցանիշ 2.12.	Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների)
Ցուցանիշ 2.13.	Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը
Ցուցանիշ 2.14.	Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.15.	Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.16.	Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)
Ցուցանիշ 2.17.	Իրականացվող կրթական ծրագրերի թիվը

Յուցանիշ 2.1. Անցումն առաջինից երկրորդ կուրս /առկա ուսուցման ձև/

Յուցանիշ 2.1	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Բակալավրի ծրագրեր (%)	95.5	94.2	89.0	96.7	98.8
Մագիստրոսական ծրագրեր (%)	96.0	92.8	92.3	93.7	93.1

Առկա ուսուցման համակարգում նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ. 2024/2025 ուստարում առաջինից երկրորդ կուրս է փոխադրվել բակալավրիատի ուսանողների 98.8%-ը, մագիստրատուրայում՝ 93.1%-ը:



Յուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների

Յուցանիշ 2.2	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողների թիվը	365	234	220	280	243
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	353	224	220	277	240
Ավարտած ուսանողների տեսակարար կշիռը (%)	**96.7%**	**95.7%**	**100.0%**	**98.9**	**98.8%**
Մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողների թիվը	0	24	12	13	28
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	0	23	12	13	28
Ավարտած ուսանողների տեսակարար կշիռը (%)		**95.8**	**100.0%**	**100.0%**	**100.0%**
Շրջանավարտների թիվն ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-ի)		247	**232**	**277**	**240**
18-20		34	97	95	101
13-17		66	86	110	98
8-12		147	49	72	41

2024/2025 ուստարում բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողների թիվը կազմել է 243, որոնցից ամփոփիչ ատեստավորումը հաղթահարել է 98,8%-ը (240 ուսանող)։ Այն համահունչ է նախորդ տարվա ցուցանիշին։ Ամփոփիչ ատեստավորումը չի հաղթահարել 3 ուսանող։ Վերջին հինգ տարիների ընթացքում շրջանավարտների ամենամեծ թիվը գրանցվել են 2020/2021 և 2023/2024, իսկ ամենաբարձր տեսակարար կշիռը 2022/2023 և 2023/2024 ուստարիներում։ Ընդհանուր առմամբ, բակալավրիատն ավարտած ուսանողների տոկոսը կազմել է 95%-100%։

2024/2025 ուստարում մագիստրատուրայի ուսանողների թիվը կազմել է 28, որը բարձր է նախորդ տարիների համեմատությամբ։ Վերջին չորս տարիների ընթացքում մագիստրատուրայի ուսանողների թիվը տատանվել է, մինչդեռ ավարտման ցուցանիշը պահպանվել է 100% մակարդակի վրա։Սա ցույց է տալիս, որ ուսանողները հիմնականում հաջողությամբ ավարտում են իրենց ուսումը։

2020-2024 թթ. տվյալները թույլ են տալիս գնահատել նաև ուսանողների ավարտման մակարդակը, ինչպես նաև արդյունքները ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ)։ 2024/2025 ուստարում միջին որակական գնահատականների (ՄՈԳ) արդյունքներով 18-20 վաստակել է շրջանավարտների 42%-ը, 13-17՝ 41%-ը և 8-12՝ 17%-ը։

Յուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

Յուցանիշ 2.3	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
Պրոֆեսոր	5	**6.0%**	**6**	**6.7%**	**7**	**8.3**	7	**8.4%**	5	**6.3%**
Դոցենտ	31	**36.9%**	36	**40.0%**	**30**	**35.7**	31	**37.3%**	35	**43.8%**
Ասիստենտ և դասախոս	48	**57.1%**	48	**53.3%**	**47**	**56.0**	45	**54.2%**	40	**50.0%**
Ընդամենը	**84**		**90**		**84**		83		80	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	46	**54.8%**	**53**	**58.9%**	**45**	**53.6%**	42	**50.6%**	43	**53.8%**

Հիմնական դասախոսական կազմը վերջին 5 ուստարիների համար կայուն է՝ 80-ից 90: Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը այս ուսումնական տարիներին կազմել է **51-ից 59%,** ինչը Մասնաճյուղի համար կարելի է դիտարկել որպես լավ ցուցանիշ: Աճը պայմանավորված է երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև Մայր բուհից գիտական աստիճան ունեցող հրավիրված մասնագետների ներգրավմամբ:





Ցուցանիշ 2.3.1. Հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)

Ցուցանիշ 2.3.1	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
Պրոֆեսոր	1	1.6%	2	2.9%	3	4.5%	2	3.0%	3	4.8%
Դոցենտ	17	27.0%	20	29.4%	18	27.3%	22	32.8%	23	36.5%
Ասիստենտ և դասախոս	45	71.4%	46	67.6%	45	68.2%	43	64.2%	37	58.7%
Ընդամենը	**63**		**68**		**66**		**67**		63	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	**26**		**29**	**42.6 %**	**27**	**40.9%**	**28**	**41.8%**	**28**	**44.4%**
Միայն ԵՊՀ ԻՄ-ում ուսումնագի-տական գործունեություն ծավալող դասախոսների թիվը										
Այդ թվում՝ պետական համակարգի ղեկավար կազմի աշխատակից	10				9	**13.6%**	9	**13.4%**		0
Այդ թվում՝ մասնավոր ոլորտի ղեկավար կազմի աշխատակից										

2024-25 ուստարում միայն մասնաճյուղում աշխատող հիմնական դասախոսները (63 դասախոս) կազմել են ընդհանուր դասախոսական կազմի (167, ցուցանիշ 2.4) 37.7%-ը: Ընդ որում, նրանցից 28-ը (44.4%-ը) գիտական աստիճանով է և դա կազմում է հիմնական դասախոսական կազմի (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների) գիտական աստիճանով 43 դասախոսների (ցուցանիշ 2.3) քանակի 65.1%-ը (28/43=65.1):



Յուցանիշ 2.4. Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Յուցանիշ 2.4	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
Հիմնական և համատեղութ.	**116**	60.1%	**116**	67.1%	**120**	**71.9%**	115	**64.2%**	109	**65.3%**
Ժամավճար	**77**	39.9%	**57**	32.9%	**47**	**28.1%**	64	**35.8%**	58	**34.7%**
Ընդամենը	**193**		**173**		**167**		**179**		**167**	

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին 4 ուստարիների համար հիմնականում կայուն է՝ 109-120 դասախոս: Դասախոսական կազմի թվաքանակի մեջ իր ազդեցությունն է ունենում ժամավաճարային հիմունքներով աշխատող դասախոսների թիվը: 2024/25 ուստարում ժամավճարով աշխատող դասախոսների թիվը փոքր-ինչ նվազել է՝ 64-ից դարձել 58: Ժամավճարային հիմունքով դասավանդողների տոկոսը փոփոխական է և այն պայմանավորված է տվյալ ուստարվա առանձնահատկություններով, նոր մասնագիտություններում նեղ մասնագիտական դասընթացներով և հեռակա ուսուցման համակարգում նոր դասավանդողների ներառմամբ, ինչը դրսևորվել է ժամավճարով աշխատող դասախոսների թվաքանակի փոփոխությամբ:



Յուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

Յուցանիշ 2.5	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Դասախոսական կազմի համալրումը	-11	-19			
Աշխատանքի ընդունված դասախոսների թիվը					
Հիմնական դասախոսական կազմ	84	90	84	67	

Յուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ-ընդհանուր դասախոսների թիվ)

Յուցանիշ 2.6	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր դասախոսական կազմ	116	116	120	115	109
Հաստիքներ	65	67	68	67	61
Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը	**0.56**	**0.58**	**0.57**	**0.58**	**0.56**

Վերջին 5 ուստարիների համար հաստիքների օգտագործման գործակիցը համեմատաբար կայուն է՝ **0,56-0,58**: Դա պայմանավորված է բեռնվածության հստակ նորմատիվների պահպանմամբ, դասավանդողների նեղ մասնագիտացմամբ և դասախոսական կազմի պոտենցիալի արդյունավետ օգտագործմամբ, նաև հրավիրված դասախոսական կազմի ոչ լրիվ, այլ հնարավոր բեռնվածությամբ:





Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

Ցուցանիշ 2.7	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդամենը՝ հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)	84	90	**84**	**83**	**80**
Մինչև 35 տարեկան	12	12	12	9	8
35-65 տարեկան	58	58	52	53	53
65-ից բարձր	14	20	20	21	19
Միջին տարիք	**50.4**	**51.3**	**51.4**	**52.2**	**52.1**
Ընդամենը՝ հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)	63	68	**66**	**67**	**63**
Մինչև 35 տարեկան	12	12	12	9	7
35-65 տարեկան	42	43	42	45	44
65-ից բարձր	9	13	12	13	12
Միջին տարիք	**49.3**	**50.2**	**50.0**	**50.9**	**51.2**

Վերջին 5 ուստարիների այս ցուցանիշները ցույց են տալիս, որ հիմնական դասախոսական կազմը կայուն է, որովհետև զգացվում է նույն կազմի տարիքային աճ, և նկատվում է, որ երիտասարդ դասախոսներ վերջին տարիներին քիչ են ներգրավվել: Միջին տարիքը կազմում է 49-52, որը տարածաշրջանային բուհի համար լավ ցուցանիշ է: Հիմնական դասախոսական կազմի (ներառյալ ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված) միջին տարիքը 2024-25 ուստարում եղել է 52.1 և առանց ԵՊՀ-ից հրավիրված համատեղությամբ աշխատող համակազմի հետ միասին դիտարկման արդյունքներով՝ 51.2: ԵՊՀ-ից հրավիրված դասախոսական կազմում մեծ թիվ են կազմում միջին տարիքի և 65-ից բարձր տարիք ունեցող դասախոսները:

Այս տվյալները ցույց են տալիս, որ դասախոսական կազմը երիտասարդ դասախոսներով համալրելու կարիք ունի:





Ցուցանիշ 2.8. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

Ցուցանիշ 2.8	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Մասնագիտական	9	15	26	20	9
Մանկավարժական	55	168	10	25	28
Համակարգչային	62	73	106	45	18
Այլ	80	73	52	28	25
Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը	**206**	**329**	**194**	**118**	**80**

2020-21 ուստարում առաջին անգամ ԵՊՀ ԻՄ-ի դասախոսները մասնակցել են ԵՊՀ-ում կազմակերպվող վերապատրաստման առցանց դասընթացներին: Կազմակերպվել են դասախոսների մանկավարժական հմտությունների զարգացման և կատարելագործման ուղղությամբ մի շարք դասընթացներ, որոնց միջինում մասնակցել են 55 դասախոսներ: Վերապատրաստումներ են իրականացվել նաև դասախոսների ՏՀՏ օգտագործման և առցանց ուսումնառության հարթակների օգտագործման հմտությունների զարգացման ուղղությամբ /Moodle, Zoom, Google Apps/: 2017-2021թթ. կրթագիտական ծրագրի շրջանակներում 2022-23 ուստարում իրականացվել են վերապատրաստման 14 դասընթացներ (**«Անձի ստեղծարարության զարգացումը մասնագիտական գործունեության մեջ», «Հոգեբանական ինքնակարգավորումը սթրեսային իրադրությունում», «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Աշխատանքային իրավահարաբերություններ», «Թվային և տեղեկատվական անվտանգություն հիմունքներ», «Ներառական կրթություն», «ՏՀՏ կիրառումը աշխատանքային գործընթացում», «Supervision.ysu.am», «ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի կիրառման առանձնահատկությունները», «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ»**), որին մասնակցել են 194 դասախոսներ և աշխատակիցներ:

Իսկ թվի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ դասընթացներ պարբերաբար կրկնվում են և մասնակիցների թիվը նվազում է:

2023-24 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է 10 դասընթացներ (**«Անձի ստեղծարարության զարգացումը մասնագիտական գործունեության մեջ», «ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի կիրառման առանձնահատկությունները», «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ», Հաղորդակցման հմտություններ, «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Ինչպես պատրաստել գրավիչ պրեզենտացիա» Կորպորատիվ կառավարում, մշակույթը, սկզբունքները, ՀՀ ներդրման սկզբունքներն ու պահանջները**), որոնց մասնակցել են 118 դասախոսներ և աշխատակիցներ:

2024-2025 ուստարվա ընթացքում իրականացվել է 10 **«Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Մասնագիտական պրակտիկաները Moodle համակարգի միջոցով իրականացում», «Կազմակերպությունների հզորացման գործոնները»,«Moodle համակարգում գիտելիքի ստուգման և գնահատման գործիքակազմը և դրա առանձնահատկությունները», «Արհեստական բանականության արդի խնդիրները և լուծումները», «Պանթյուրքիզմի քաղաքականության մեխանիզմները և Հայաստանը», «Գիտաչափական հոդվածների հրապարակման աշխուժացում», «Գիտատեղեկատվական շտեմարաններ և դրանցում ընդգրկված ամսագրերում տպագրվելու ընթացքը և պահանջները» (3 դասընթաց),** որոնց մասնակցել են Մասնաճյուղի ավելի քան 80 դասախոսներ և աշխատակիցներ:



Ցուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

Ցուցանիշ 2.9	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական դասախոսական կազմ	84	90	84	83	80
Իգական սեռի դասախոսներ	42	54	50	48	50
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	50.0	60.0	59.5	57.8	62.5

2024/25 ուստարում հիմնական դասախոսական կազմում իգական սեռի դասախոսների մասնաբաժինը կազմել է **62.5%**, ինչը բարձր է վերջին հինգ տարվա միջին (մոտ 60%) ցուցանիշից: Այս աճը ցույց է տալիս, որ վերջին ուստարում մասնաճյուղում պահպանվել և նույնիսկ մեծացել է կանանց ներգրավվածությունը դասախոսական կազմում:Այն պայմանավորված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերով և կարելի է դիտարկել որպես դրական արդյունք:





Յուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

Յուցանիշ 2.10	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ուսանողներ	1288	1186	1145	1182	1096
Դասախոսական հաստիքներ	65	67	68	67	61
Ուսանող/դասախոս հարաբերությունը	19.82	17.7	16.84	17.64	17.97

Վերջին 5 ուստարիների կտրվածքով ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը համեմատաբար կայուն է՝ 17-20, պայմանավորված ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ: 2024-25 ուստարում այդ հարաբերակցությունն աճել է նախորդ 3 ուստարիների համեմատ, ինչը պայմանավորված է ինչպես դասախոսական հաստիքների թվի, այնպես էլ ուսանողների թվի նվազմամբ:

Ուսանողների թվաքանակն ընդգրկում է նաև հեռակա ուսուցման և 2022-23 ուստարվանից մագիստրատուրայի սովորողներին:





Յուցանիշ 2.11. Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

Յուցանիշ 2.11	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ուսանողներ	1288	1186	1145	1182	1096
Ուսումնաօժանդակ կազմ	19	25	24	24	13
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	**67.79**	**47.44**	**47.71**	**49.25**	**84.31**

Համաձայն մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2018-2023թթ-ին մասնաճյուղում կատարվել է ուսումնաօժանդակ անձնակազմի օպտիմալացում՝ պայմանավորված նաև ուսանողների թվի նվազմամբ: Դրա արդյունքում ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը մեծացել է: 2021-2022 ուստարում ուսումնաօժանդակ կազմի թվաքանակն ավելացել է նախորդ տարիների համեմատ՝ հեռակա ուսուցման բաժնի լուծարման արդյունքում, որի աշխատակիցները ներգրավվել են ֆակուլտետներում ուսումնաօժանդակ աշխատանքների կազմակերպման գործում, նաև նոր կրթական ծրագրերի ներդրման պահանջներով: Վերջին երկու ուստարիներին այն մնացել է կայուն: 2024/25 ուստարում ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը **աճել է՝ հասնելով 84.31-ի**, որը հետևանք է ուսումնաօժանդակ կազմի և ուսանողների **թվաքանակի կտրուկ նվազման:** Այս փոփոխությունը ցույց է տալիս, որ ուսումնաօժանդակ աշխատողների ծանրաբեռնվածությունը 2024/25 ուստարում էապես մեծացել է:





Յուցանիշ 2.12. Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

Յուցանիշ 2.12	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	721.7	709.5	721.8	714.9	747.9
Բնական գիտությունների ֆակուլտետ	722.8	747.0	715.3	718.2	722.1
Տնտեսագիտության ֆակուլտետ	708.6	710.2	719.7	730.8	733.1
Կիրառական արվեստի ֆակուլտետ	726.0	740.3	728.8	751.5	731.8
Համահամալսարանական ամբիոններ	716.0	782.0	734.7	698.3	702.3
Համահամալսարանական միջինը	**719.0**	**737.8**	**724.1**	**722.7**	**727.4**

Դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը, սահմանված նորմերի համաձայն, կազմում է ոչ պակաս 700 ժամ: 2024/2025 ուստարում մասնաճյուղում դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը գտնվում է սահմանված նորմատիվի շրջանակներում:



Յուցանիշ 2.13. Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

Յուցանիշ 2.13	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի թիվը	1	4	4	3	0
Հիմնական դասախոսական կազմը	63	68	66	67	63
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	**0.02**	**0.06**	**0.06**	**0.04**	**0.00**

Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակած ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի թիվը վերջին 3 ուստարվա համար աճել է, համեմատած նախորդ 2 տարիների, որն ամենայն հավանականությամբ պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի կողմից իրականացվող գիտական գործունեության խրախուսման քաղաքականությամբ, ԵՊՀ ԻՄ-ում գիտական կոչումներով պայմանավորված աշխատավարձերի տարբերության աճով, ինչպես նաև նախորդ 2 ուստարիներին ՀՀ-ում տիրող զարգացումներով: Նշենք, որ 2019-20 ուստարվանից հրատարակումների թիվը ներկայացված է միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի համար (առանց ԵՊՀ-ից հրավիրվածների): 2024–2025 ուստարվա ընթացքում Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից չկան նոր հրատարակված ուսումնամեթոդական նյութեր:





Յուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.14	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	77.1	78.88	89.59	86.85	72.13
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	65.3	85.4	64.53	43.75	55.73
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	83.4	52.2	78.29	68.18	41.46
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	81.3	71.05	80.23	89.28	66.02
Միջին տարեկան ցուցանիշը(%)	**76.8**	**71.9**	**78.2**	**72.0**	**58.8**

2024/2025 ուստարում գրանցված առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը մասնաճյուղում առկա ուսուցմամբ կազմել է **58.8%,** հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **27.55%,** մագիստրատուրայում՝ **94.91%:**



Ցուցանիշ 2.15. Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.15	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4.76	4.76	4.67	4.57	4.70	4.64	4.70	4.56	**4.74**	**4.76**
Բնական գիտությունների ֆակուլտետ	4.62	4.35	4.57	4.93	4.48	4.66	4.75	4.72	**4.72**	**4.71**
Տնտեսագիտության ֆակուլտետ	4.84	4.80	4.72	3.53	4.75	4.77	4.67	4.70	**4.64**	**4.80**
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4.70	4.60	4.56	4.60	4.63	4.64	4.75	4.77	**4.71**	**4.68**
Համահամալսարանական ամբիոններ	4.80	4.77	4.68	5.00	4.65	4.56	4.65	4.58	**4.66**	**4.74**

2024-2025 ուսումնական տարում բոլոր ֆակուլտետներում գրանցվել է 4.60-ից բարձր ցուցանիշ, որը վկայում է բարելավման և կայուն կրթական գործընթացի մասին: Հումանիտար գիտությունների ֆակուլտետում 2024/2025 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում փոփոխությունը կազմել է +0.02, որը կայուն, դրական միտում ունի, ինչպես նաև ունի բարելավում 2021/2022, 2022/2023, 2023/2024 ուստարիների համեմատությամբ:

Բնական գիտությունների ֆակուլտետում 2024/2025 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում փոփոխությունը կազմել է -0.01, որը կայուն է, ունի փոքր անկման միտում 2023/2024 ուստարվա համեմատությամբ՝ չնայած 2020/2021, 2021/2022, 2022/2023 ուստարիների նկատմամբ բարելավմանը:

Տնտեսագիտական ֆակուլտետում 2024/2025 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում փոփոխությունը կազմել է +0.16, որը զգալի բարելավում է: Առաջին կիսամյակում թեև գրանցվել է ցածր ցուցանիշ (նաև նախորդ տարիների համեմատությամբ), երկրորդ կիսամյակում ֆակուլտետն ունեցել է առաջընթաց և գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը և՛ 2024/2025 ուստարվա հարցումներում, և՛ նախորդ տարիների համեմատությամբ:

Կիրառական արվեստի ֆակուլտետում 2024/2025 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում փոփոխությունը կազմել է -0.03, որը կայուն է, ունի փոքր անկման միտում, ցածր է 2023/2024 ուստարվա համեմատությամբ՝ չնայած 2020/2021, 2021/2022, 2022/2023 ուստարիների նկատմամբ բարելավմանը:

Համահամալսարանական ամբիոնում 2024/2025 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում փոփոխությունը կազմել է +0.08, որը կայուն, դրական միտում ունի, ինչպես նաև ունի բարելավում 2022/2023, 2023/2024 ուստարիների համեմատությամբ:

Ցուցանիշ 2.16. Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Ցուցանիշ 2.16	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Բակալավրիատի ուսանողների թիվը, այդ թվում.	**548**	**481**	**632**	**649**	**619**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	282	254	335	342	319
Բնական գիտությունների ֆակուլտետ	86	60	78	81	71
Տնտեսագիտության ֆակուլտետ	114	114	152	149	142
Կիրառական արվեստի ֆակուլտետ	66	53	67	77	87
85%-ից բարձր ՄՈԳ գրանցած ուսանողների թիվը, այդ թվում.	149	**169**	**201**	**194**	**183**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	81	91	124	118	107
Բնական գիտությունների ֆակուլտետ	17	15	15	16	18
Տնտեսագիտության ֆակուլտետ	32	35	35	28	25
Կիրառական արվեստի ֆակուլտետ	19	28	27	32	33
ՄՈԳ-ը բարելաված ուսանողների թիվը (առնվազն 5%)	245	**197**	**324**	**308**	**293**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	123	86	169	163	137
Բնական գիտությունների ֆակուլտետ	44	32	43	46	42
Տնտեսագիտության ֆակուլտետ	39	48	80	62	84
Կիրառական արվեստի ֆակուլտետ	39	31	32	37	30
ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների թիվը (առնվազն 5%)	119	182	130	167	**130**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	61	105	72	103	85
Բնական գիտությունների ֆակուլտետ	21	21	12	8	14
Տնտեսագիտության ֆակուլտետ	31	41	26	44	16
Կիրառական արվեստի ֆակուլտետ	6	15	20	12	15

2024/25 ուստարում ուսանողների առաջադիմության ընդհանուր դինամիկան շարունակում է մնալ կայուն և դրական: Հաշվետու ուստարում առկա ուսուցման բակալավրիատի 85%-ից բարձր ՄՈԳ գրանցած ուսանողների թիվը կազմում է ընդհանուր ուսանողների թվի **29.6%-ը** (2023/24 – 29.9%), որը նախորդ ուստարվա համեմատ մի փոքր նվազել է: Նվազումը հիմնականում պայմանավորված է բակալավրիատի ուսանողների ընդհանուր թվաքանակի որոշակի կրճատմամբ, ՄՈԳ-ը բարելաված ուսանողների բաժնեմասը 2024/25 ուստարում կազմել է՝ **47.3%**, որը նախորդ ուստարվա (47.5%) համեմատ կարելի է համարել կայուն ցուցանիշ, իսկ ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների բաժնեմասը կազմել է **21.0%** (130 ուսանող 619-ից), որը 2023/24 ուստարվա համեմատ (25.7%) նկատելի նվազել է, այն կարելի դիտարկել դրական ցուցանիշ և արդյունք ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և ուսանողների առաջադիմությանը հետևելու ու աջակցման համակարգերի բարելավման արդյունք:



Ցուցանիշ 2.17. Իրականացվող կրթական ծրագրերի թիվը

Ցուցանիշ 2.17	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Կրթական ծրագրերի թիվը Այդ թվում՝	**17**	**21**	**23**	**23**	**20**
Բակալավրի կրթական ծրագրեր	16	20	20	20	17
Մագիստրոսի կրթական ծրագրեր	1	1	1	2	2
Ներդրված նոր կրթական ծրագրեր	1	0	1	0	0
Հավատարմագրված կրթական ծրագրերի թիվը					
Հավատարմագրված կրթական ծրագրերի մասնաբաժինը կրթական ծրագրերի ընդհանուր թվում (%)					**0**
Լրացուցիչ կրթական ծրագրեր			1	1	1

2024-25 ուստարում հեռակա ուսուցման համակարգում ընդունելություն չլինելու պատճառով չեն գործել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Բնապահպանություն և բնօգտագործում» և «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերը, այդ պատճառով նվազել է բակալավրի կրթական ծրագրերի թիվը:

Այստեղ լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման ցուցանիշում ներառված է մասնաճյուղի կողմից հերթական ատեստավորման ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը:

Ուսուցիչների հերթական ատեստավորմանը զուգահեռ Մասնաճյուղն իրականացնում է նաև 0-59 միավոր արդյունք ցուցաբերած ուսուցիչների առարկայական վերապատրաստում:

ԲՆԱԳԱՎԱՌ 3.

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Յուցանիշ 3.1.	Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող/աշխատող
Յուցանիշ 3.2.	Դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.3.	Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)
Յուցանիշ 3.4.	Տարեկան բյուջեն (տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հազար դրամ)
Յուցանիշ 3.5.	Օպերատիվ բյուջեն (ծախսերի ծավալ/ուսանող և մուտքերի ծավալ/ուսանող հարաբերակցությունները, հազար դրամ)
Յուցանիշ 3.6.	Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հազար դրամ)
Յուցանիշ 3.7.	Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հազար դրամ)
Յուցանիշ 3.8.	Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 3.9.	Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հազար դրամ)
Յուցանիշ 3.10.	Ուսման միջին վարձաչափը (հազար դրամ)
Յուցանիշ 3.11.	Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին
Յուցանիշ 3.12.	Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.13.	Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.14.	Ծախսերի ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.15.	Հարկերի ծավալ/փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող-աշխատող հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Աշխատողների ընդհանուր թիվը	269	261	247	258	245
Ուսանողների թիվը	1288	1186	1145	1182	1096
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	**4.8**	**4.5**	**4.6**	**4.6**	**4.5**

Նախորդ երեք ուստարիների ընթացքում ուսանող/աշխատող հարաբերակցությունը փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 4.5–4.6, ինչը պայմանավորված է հիմնականում ուսանողների թվաքանակի նվազմամբ, իսկ աշխատողների թվաքանակը գրեթե մնացել է անփոփոխ: 2022-23 ուստարում աշխատողների թիվը նվազել է, այս փոփոխությունները հիմնականում կախված են դասախոսական կազմի փոփոխություններով (հիմնականում համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների թվի ավելացման պատճառով), ինչը պայմանավորված է դասախոսների բեռնվածության թեթևացմամբ և նեղ մասնագիտական դասընթացների իրականացման համար նոր կադրերի ներգրավմամբ: 2023-2024 ուստարում նախորդ տարվա համեմատ ավելացել է և՛ աշխատողների, և՛ ուսանողների թիվը, ուսանող- աշխատող հարաբերակցությունը պահպանվել է 4.6 միջակայքում: 2024/25 ուստարում, ուսանողների թվաքանակի շարունակական նվազման պայմաններում ուսանող/աշխատող հարաբերակցությունը պահպանվել է 4.5 մակարդակում՝ աշխատողների թվի գրեթե անփոփոխ լինելու արդյունքում:





Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.2	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Դասախոսական կազմը	116	116	120	**115**	109
Ուսումնաօժանդակ և վարչական կազմ	102	89	86	**85**	80
Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը	**1.14**	**1.30**	**1.40**	**1.35**	**1.36**

Նախորդ 2 ուստարիների հետ համեմատած 2022-23 ուստարում դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը աճել է. ավելացել է դասախոսական կազմը, իսկ ուսումնաօժանդակ ու վարչական կազմի թվաքանակը նվազել է (նշենք, որ հիմնականում վարչական կազմի օպտիմալացման հաշվին՝ ցուցանիշ 2.11, լուծարվել են հեռակա ուսուցման բաժինը և «Տավուշ» հետազոտական կենտրոնը): 2023-24 ուստարում այդ հարաբերակցությունը նվազել է նախորդ տարվա համեմատ՝ պայմանավորված դասախոսական կազմի և ուսումնաօժանդակ և վարչական կազմի փոփոխություններով: 2024/25 ուստարում դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ կայուն է՝ կազմելով 1.36, ինչը հիմնականում պայմանավորված է վարչական և ուսումնաօժանդակ կազմի շարունակական օպտիմալացմամբ և դասախոսական կազմի նվազումով:





Ցուցանիշ 3.3. Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)

Ցուցանիշ 3.3	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Դասախոսական կազմում (%)	1.02				
Ընդհանուրում (%)	1.03				

Աշխատողների հոսունության ցուցանիշները պայմանավորված են ժամավճարային հիմունքներով դասավանդողների բաժնեմասով և Երևանից հրավիրված այն մասնագետների փոփոխությամբ, որոնք չեն հարմարվում երկար ճանապարհին: Սակայն վերջին տարիներին ցուցանիշի նվազման միտում է նկատվում, ինչը վկայում է աշխատողների կայունության մասին:

Ցուցանիշ 3.4. Տարեկան բյուջեն
(տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հզ. դր.)

Ցուցանիշ 3.4	2020	2021	2022	2023	2024
Դրամական միջոցները տարեսկզբին	60949	81557	43170	77890	33836
Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	283090	285800	266055	283625	292777
Եկամուտներ պետական բյուջեից	119859	168994	141843	147240	137255
Եկամուտներ գիտական արդյունքների ապրանքայնացումից					
Այլ եկամուտներ	75285	68827	**83731**	69861	63273
Ընդամենը տարեկան եկամուտներ	**478234**	**523621**	**491629**	**500726**	**493305**
Տարեկան բյուջեն	**539183**	**605178**	**534799**	**578616**	**527141**

2024թ.-ի Մասնաճյուղի տարեկան բյուջեն 2023թ. համեմատ նվազել է **8.9%**-ով : Դրա մեջ հիմնականում իր ազդեցությունն ունի պետական բյուջեից հատկացումների ծավալի, այլ եկամուտների և տարեսկզբի միջոցների ցածր ցուցանիշները:

Վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել է **3.2%**-ով՝ վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների թվի ավելացման պատճառով: 2024թ.-ի **տարեկան բյուջեի 55.5%-ը** կազմում են վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները: Ընդ որում, **տարեկան եկամուտների 59.4%-ը** կազմում են վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները:







Յուցանիշ 3.5. Օպերատիվ բյուջեն
(ծախսերի ծավալ-ուսանող և մուտքերի ծավալ-ուսանող հարաբերակցությունները, հզ. դր.)

Յուցանիշ 3.5	2020	2021	2022	2023	2024
Ուսանողների թիվը	1288	1186	1145	1182	1096
Եկամուտների ծավալ	539183	605178	534799	578616	527141
Եկամուտների ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**418.6**	**510.3**	**467.1**	**489.5**	**481.0**
Ծախսերի ծավալ	457625	493161	530579	572093	534027
Ծախսերի ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**355.3**	**415.8**	**463.4**	**484.0**	**487.3**

2024թ.-ին մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը 2023թ. համեմատ նվազել է 8.9% -ով, որը պայմանավորված է ուսանողների թվի կրճատմամբ, ինչի հետևանքով նվազել են վճարովի ուսուցման ծառայություններից ստացվող եկամուտները, որոնք մասնաճյուղի հիմնական եկամտային աղբյուրներից են:: Ընդհանուր առմամբ, 2020-2023թթ. ավելացել է մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը, ինչը կապված է իրականացված տեխնիկական վերազինմամբ. լսարանները և համակարգչային սրահները տեխնիկապես հագեցվել են, կատարվել է ուսումնական տարածքի վերանորոգում:

2024թ. ծախսերի ծավալը 2023թ. համեմատ նվազել է մոտ 6.7%-ով, ինչը պայմանավորված է ուսանողների թվի և պետական հատկացումների կրճատմամբ:

Ինչպես ցույց են տալիս արդյունքները, 2024թ.-ին մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը՝ **487300** դրամ է, որը գրեթե հավասար է մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալին՝ **481000** դրամ:





Յուցանիշ 3.6. Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հզ. դր.)

Յուցանիշ 3.6	2020	2021	2022	2023	2024
Տարեվերջից տեղափոխվող մնացորդը	81557	82118	43170	77890	33836

2024թ. տարեվերջի ֆինանսական մնացորդը կազմել է 33,836 հզ. դրամ՝ նախորդ տարվա մնացորդի համեմատ զգալիորեն նվազելով: Նվազումը պայմանավորված է տարեսկզբի միջոցների օգտագործմամբ, եկամուտների կրճատմամբ, ընթացիկ ծախսերի պահպանմամբ:





Ցուցանիշ 3.7. Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հզ. դր.)

Ցուցանիշ 3.7	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը տարեկան եկամուտներ	478234	**523621**	**491629**	**500726**	**493305**
Արտաբյուջետային մուտքեր, այդ թվում՝	**358374**	**354627**	**347079**	**355165**	**356049**
Վճարովի ուսուցման ծառայությունից	283090	285800	266055	283625	292777
Բարեգործական եկամուտներ	90	0		0	0
Եկամուտներ գիտական արդյունքների ապրանքայնացումից					
Առևտրային բանկերում ավանդ ձևակերպված գումարներից ստացվող %-ներից եկամուտներ	70186	60846	71280	65155	55892
Այլ եկամուտներ	5008	7981	9744	6385	7380
Տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտներում (%)	**74.9**	**67.7**	**70.6**	**70.9**	**72.2**

2024թ. արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր տարեկան եկամուտների մեջ աճել է նախորդ երեք տարիների համեմատ և կազմել **72.2%**, ինչը պայմանավորված է տարեկան ընդհանուր եկամուտների փոքր նվազմամբ և վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտների մեծացմամբ:

Վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտների հաշվեկշիռը արտաբյուջետային միջոցների ընդհանուր ծավալում 2024թ-ին կազմել է **82.2%,** որն էլ ավելացել է ուսանողների թվի ավելացման պատճառով:

Բարեգործական և այլ եկամուտները կայուն չեն:





Յուցանիշ 3.8. Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր.)

Յուցանիշ 3.8	2020	2021	2022	2023	2024
Տարեկան ընդհանուր ծախսեր	457625	493161	530579	572093	534027
Ուսումնական ծախսեր	235500	240500	260200	265100	230010
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	**51.5**	**48.8**	**49.0**	**46.3**	**43.1**
Գիտահետազոտական աշխատանքներին տրվող ծախսեր	**2000**	**2000**	**2000**	**2000**	**1700**

Ուսումնական ծախսերը 2024թ.-ին 2023թ.-ի համեմատ նվազել են **13.2%-ով,** որը պայմանավորված է հիմնականուն ուսանողների թվի նվազմամբ և ընդհանուր տարեկան ծախսերի կրճատմամբ:Տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը վերջին 5 տարիների համար համեմատաբար կայուն է և գտնվում է **43.1%-51.5%** միջակայքում: Մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսը 2024թ.-ին կազմել է **209863**(230010/1096) դրամ: Վերջին տարիներին Մասնաճյուղը գումարներ է ծախսել նաև գիտահետազոտական աշխատանքների համար: 2024թ. գիտահետազոտական աշխատանքների համար ծախսվել է 1,700 հզ. դրամ, ինչը փոքր-ինչ նվազել է նախորդ տարիների համեմատ:







Ցուցանիշ 3.9. Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր)

Ցուցանիշ 3.9	2020	2021	2022	2023	2024
Տարեկան ընդհանուր ծախսեր	457625	493161	530579	572093	534027
Ուսումնաօժանդակ ծախսեր	50500	53200	55300	58000	54000
դասախոսական կազմի գիտաժողովների մասնակցության, հրապարակումներին, գործուղումներին աջակցության					
գիտաժողովների կազմակերպման աջակցության			389,5		
գիտական հետազոտությունների իրականացման					
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	11.0	10.8	10.4	10.1	10.1

Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը 2020-2024 տարիների համար համեմատաբար կայուն է և նվազել է 11.0%-ից մինչև 10.1%, որը հիմնավորում է օպտիմալ ուսումնաօժանդակ անձնակազմի և անհրաժեշտ պայմանների առկայությունը:

2024թ. նախորդ տարվա համեմատ նվազել են ուսումնաօժանդակ ծախսերը, դրան զուգահեռ նաև տարեկան ընդհանուր ծախսերը և ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը կազմել է **10.1:**

2022թ. մարտի 15-16 առցանց ձևաչափով անցկացվել է ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների համար նախատեսված «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» միջազգային գիտագործնական համաժողովը, որն անց է կացվել 3 լեզուներով (հայ., ռուս., անգլ.): Միջոցառման կազմակերպիչները պարգևատրվել են: Տպագրվել է գիտաժողովի նյութերի ժողովածուն 27 օրինակից (541 էջ ծավալով), յուրաքանչյուրը 8500 դրամ արժողությամբ: Սրա արդյունքում 2022թ.-ի համար համապատասխան ցուցանիշը լրացվել է՝ **389 500 դրամ:**





Յուցանիշ 3.10. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)

Յուցանիշ 3.10	2020	2021	2022	2023	2024
ՀՀ քաղաքացիների համար միջին վարձաչափը	340	360	390	410	430

2024թ. ուսման միջին վարձաչափը կազմել է 430 հզ. դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 20 հզ. դրամով: Այս փոփոխությունը շարունակել է վերջին տարիների կայուն աճի դինամիկան, ինչն ապահովում է վճարովի ուսուցման եկամուտների կայունությունը:



Յուցանիշ 3.11. Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին

Յուցանիշ 3.11	2020	2021	2022	2023	2024
Պրոֆեսոր	222416	250000	250000	310000	310000
Դոցենտ	191000	225000	225000	245000	245000
Ասիստենտ և դասախոս	184060	215000	215000	225000	225000
Դասախոսական միջին աշխատավարձը	175694	230000	230000	260000	260000
ՀՀ միջին աշխատավարձը	183700	204000	204000	270000	270000
Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին	0.96	1.13	1.13	0.96	0.96

Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին հիմնականում կայուն է, այն տատանվում է **0.96-1.13** միջակայքում:





Յուցանիշ 3.12. Աշխատավարձ և եկամտային հարկ-ծախսեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.12	2020	2021	2022	2023	2024
Աշխատանքի վարձատրության ծախսեր (հզ.դր.)	319102	336361	354169	354767	347808
Եկամտային հարկ (հզ. դր.)	93998	92800	92700	93500	83300
Ընդամենը աշխատավարձի և սոց. վճարների ծախսեր (հզ. դր.)	413100	429161	446869	448267	431108
Տարեկան ընդհանուր ծախսեր (հզ. դր.)	457625	493161	530579	572093	534027
Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ /ծախսեր հարաբերակցությունը	**0.90**	**0.87**	**0.84**	**0.78**	**0.81**

Ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և եկամտային հարկի ծախսերը՝ **78%-90%,** (ինչը պայմանավորված է կազմակերպության գործունեության բնույթով, կազմակերպա-իրավական ձևով): Ընդ որում 2020 թ. մասնաճյուղի ֆինանսների 90%-ը, 2021թ.-ին՝ 87%-ը, 2022թ.-ին՝ 84%-ը ,2023թ.-ին՝ 78%-ը և 2024թ.-ին 81%-ը ծախսվում է աշխատավարձի տրման և սոցիալական վճարումների վրա: 2021-2024 թթ.-ին այդ ծախսերի ծավալը համեմատաբար իջել է, ինչը հիմնավորվում է հարկային համապատասխան օրենքների փոփոխություններով (եկամտային հարկի իջեցմամբ):





Ցուցանիշ 3.13. Արտաբյուջետային մուտքեր-բյուջետային մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.13	2020	2021	2022	2023	2024
Արտաբյուջետային մուտքեր (հզ. դր.)	358374	354627	347079	355165	356049
Պետական բյուջեից ստացվող մուտքեր (հզ. դր.)	119859	168994	141843	147240	137255
Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը	**3.0**	**2.1**	**2.4**	**2.4**	**2.6**

2020-2022թթ.-ին այս ցուցանիշը նվազել է պետական բյուջեից մուտքերի ծավալի մեծացման և արտաբյուջետային մուտքերի նվազման պատճառով:

2021թ.-ին այդ ցուցանիշը էապես նվազել էր պետական բյուջեից ֆինանսավորման ավելացման արդյունքում, ինչը պայմանավորված է պետության կողմից 44-օրյա պատերազմի մասնակիցների ուսման վճարի փոխհատուցմամբ: 2022-2023թթ կրկին այն բարձրացել է և կազմել է 2.4% որը պայմանավորված է պետական բյուջեից ֆինանասավորման նվազմամբ:

2024թ. այս ցուցանիշը մնացել է կայուն նախորդ տարվա համեմատ և կազմել է 2.6%:





Յուցանիշ 3.14. Ծախսերի ծավալ-բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը

Յուցանիշ 3.14	2020	2021	2022	2023	2024
Բյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	119859	168994	141843	147240	137255
Արտաբյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	337766	324167	388736	424853	396772
Ծախսերի ընդհանուր ծավալ (հզ. դր.)	457625	493161	530579	572093	534027
Ծախսերի ծավալ/ բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը	**3.82**	**2.92**	**3.74**	**3.89**	**3.89**

Ծախսերի ընդհանուր ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը 2020-2024թթ.-ին կազմել է **2.9.-3.9**, որը փաստում է ծախսերի ընդհանուր մեծ ծավալը բյուջետային ծախսերի համեմատ: Այդ թվականներին բյուջետային ծախսերի չափը հիմնականում կայուն է եղել: 2021թ-ի համար այդ ցուցանիշը նվազել է՝ **2.92,** բյուջետային ծախսերի ծավալի մեծացման հաշվին՝ պայմանավորված պետական բյուջեից ստացվող մուտքերի ավելացմամբ: 2021թ.-ին նվազել է նաև արտաբյուջետային ծախսերի ծավալը: 2022թ. այդ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է, որը պայմանավորված է բյուջետային ծախսերի ծավալի նվազմամբ և արտաբյուջետային ծախսերի ծավալի ավելացմամբ:

2023թ.- ին այդ ցուցանիշը 2022թ.- ի համեմատ աճել է՝ պայմանավորված հիմնականում արտաբյուջետային ծախսերի մեծացմամբ, որոնք կազմել են ընդհանուր ծախսերի **74.3%-ը**: 2024թ. ցուցանիշը էական փոփոխություն չի կրել, մնացել է կայուն՝ համեմատած 2023թ.-ի հետ:





Յուցանիշ 3.15. Հարկերի ծավալ - փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.15	2020	2021	2022	2023	2024
ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկեր (հզ. դր.)	108043	116027	123289	122743	115120
Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ ֆինանսավորման չափը (հզ. դր.)	119859	168994	141843	147240	137255
Հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը	**0.90**	**0.69**	**0.87**	**0.83**	**0.84**

2020–2024թթ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից պետական բյուջե վճարվող հարկերի ծավալը կազմել է ստացված պետական ֆինանսավորման **69%–90%**:

2020թ.հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը 0.90 է, ինչը ցույց է տալիս, որ հարկերի ծավալը գրեթե հավասար է եղել պետական ֆինանսավորմանը, 2021թ. նվազել է 0.69-ի՝ պետական ֆինանսավորման ավելացման պատճառով, իսկ հարկերի ծավալը կայուն է մնացել: 2022թ.-ին այն կազմել է 0.87, ավելացել է մասնաճյուղի կողմից պետական բյուջե վճարվող հարկերի ծավալը, որը պայմանավորված է աշխատակազմի թվաքանակի ավելացմամբ, ինչպես նաև ռեսուրսների օգտագործման հետ կապված ծախսերի ավելացմամբ:2023–2024թթ. հարաբերակցությունը մնացել կայուն՝ համապատասխանաբար 0.83 և 0.84, ինչը վկայում է, որ հարկային պարտավորությունները համաչափ են ստացված պետական ֆինանսավորմանը:





ԲՆԱԳԱՎԱՌ 4.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Յուցանիշ 4.1.	Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը
Յուցանիշ 4.2.	Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը
Յուցանիշ 4.3.	Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը
Յուցանիշ 4.4.	Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում
Յուցանիշ 4.5.	Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը
Յուցանիշ 4.6.	Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ ուսանողների և դասախոսների թվին
Յուցանիշ 4.7.	Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ ծախսերի համագումարում
Յուցանիշ 4.8.	Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը
Յուցանիշ 4.9.	Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը
Յուցանիշ 4.10.	Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը
Յուցանիշ 4.11.	Վերանորոգված, արդիականացված ենթակառուցվածքներ

Ցուցանիշ 4.1. Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը

Ցուցանիշ 4.1	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
ԵՊՀ ԻՄ ընդհանուր տարածքը /մ ²/	13195	13195	13195	13195	13195
Ուսանողների թիվը	1288	1186	1145	1182	1096
Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը /մ²/	**10.2**	**11.1**	**11.5**	**11.2**	**12.0**

Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքի տատանումը պայմանավորված է ուսանողների թվաքանակի փոփոխությամբ: 2023/24 ուստարում նախորդ տարվա համեմատ մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքի նվազումը կապված է ուսանողների քանակի աճով: Ուսանողների քանակի ավելացումը պայմանավորված է դիմորդների քանակի ավելացմամբ: 2024/25 ուստարում ցուցանիշը աճել է՝ ուսանողների թվի նվազման շնորհիվ:



Յուցանիշ 4.2. Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը

Յուցանիշ 4.2	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ուսումնական տարածքը /մ²/	8400	8400	8400	8400	8400
Ուսանողների թիվը	1288	1186	1145	1182	1096
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը /մ²/	**6.52**	**7.08**	**7.34**	**7.11**	**7.66**

Նախորդ 3 ուստարում մեկ ուսանողին ընկնող լսարանային տարածքն աճել է, ինչը պայմանավորված է ուսանողների քանակի նվազմամբ և ակադեմիական խմբերի ամբողջացումով: Մեկ ուսանողին ընկնող լսարանային տարածքի տատանումը պայմանավորված է նաև առկա և հեռակա ուսուցման դասընթացների լսարանային համատեղությամբ: Քանի որ վերջին տարիներին առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների քանակները գրեթե հավասարվել են, ապա լսարանային ֆոնդի օգտագործման գործակիցը երկուսի համար էլ գրեթե նույնն է: 2024/25 ուստարում մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը նախորդ ուստարվա համեմատ աճել է 0.55 միավորով, ինչը պայմանավորված է ուսանողների քանակի նվազմամբ:





Յուցանիշ 4.3. Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը

Յուցանիշ 4.3	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ակադեմիական խմբերի թիվը (միջինը՝ 36 ուսանող խմբում)	78	78	80	80	79
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	56	57	57	57	57
Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը	**0.72**	**0.73**	**0.71**	**0.71**	**0.72**

Վերջին 5 ուստարում մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակի հարաբերությունը կայուն է, որովհետև լսարանային ֆոնդում և խմբերի քանակում էական փոփոխություններ չեն եղել: 2021-2022 ուստարում լսարանային ֆոնդն ավելացել է 1-ով (բնական գիտությունների ֆակուլտետում մասնագիտական լաբորատորիայի բացման հաշվին):



Ցուցանիշ 4.4. Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում

Ցուցանիշ 4.4	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Գրքերի թիվը. Այդ թվում՝	**19578**	**20353**	**20805**	**21304**	**23428**
ամսագրեր		1396	1415	1431	1475
քարտեզներ		72	73	73	44
էլեկտրոնային գրականություն		1054	1068	1084	1120
գիտական գրականություն		12386	12691	12912	14268
այլ գրականություն		5445	5558	5804	6521
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	**1288**	**1186**	**1145**	**1182**	**1096**
Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում	**15.2**	**17.2**	**18.2**	**18.0**	**21.4**

Ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է, սակայն այս ցուցանիշն անհրաժեշտ է անընդհատ բարելավել: Զուգահեռ ստեղծվել է նաև էլեկտրոնային գրադարան՝ դասավանդվող բոլոր մոդուլների էլեկտրոնային դասախոսությունների և հիմնական դասագրքերի թվայնացված տարբերակներով:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանը (**ijevanlib.ysu.am**) 2024-25 ուստարում ուսանողներին ազատ և մատչելի տարբերակով առաջարկել է մոտ 1120 էլեկտրոնային գրքեր (հիմնականում դասագրքեր, մենագրություններ, ինչպես նաև գիտական ամսագրեր և այլն):

2024-2025 ուստարում մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը՝ **21.4,** ավելացումը պայմանավորված է հիմնականում ուսանողների ընդհանուր թվի նվազմամբ, Ամերիկյան գրադարանի գրականության և այլ նվիրատուների կողմից նվիրատվությամբ, ինչպես նաև Մասնաճյուղի ֆինանսական միջոցների հաշվին մասնագիտական գրականության գնմամբ: Նշենք, որ Մասնաճյուղի ֆինանսական միջոցների հաշվին ձեռք բերված գրականությունը հիմնականում մասնագիտական է և ապահովում է ընթերցողների ուսումնագիտական պահանջները:





Յուցանիշ 4.5. Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը

Յուցանիշ 4.5	2020	2021	2022	2023	2024
Նոր գրքերի տարեկան թիվը	341	473	329	467	2114
Նոր ամսագրերի տարեկան թիվը	51	63	19	16	37
Գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (հզ. դր.)	**164**	**621**	**846**	**796**	**342**
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1288	1186	1145	1182	1096
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	**127.3**	**523.6**	**738.9**	**673.4**	**312.0**

Նոր գրքերի և ամսագրերի թիվն անընդհատ աճում է, իսկ գրականություն ձեռք բերելու համար տարեկան ծախսերը փոփոխական են: 2024 թ.-ին նախորդ տարիների համեմատ որոշակիորեն նվազել է գրականության ձեռքբերման ծախսերը՝ պայմանավորված վերջին տարվա տպագրությունների քանակով, գրականության նկատմամբ ունեցած պահանջով, հրատարակված նոր մասնագիտական գրականության անհրաժեշտությամբ, մասնագիտական գրքերի բարձր գներով, ինչպես նաև նոր մասնագիտությունների համար անհրաժեշտ գրականության ձեռքբերմամբ: 2024թ.-ին գրականության ձեռքբերման ծախսերը կազմել է **342000 դրամ**, որը նախորդ տարվա համեմատ նվազել է **454000 դրամով**:

Ուսանողներն ու ամբիոնները հնարավորություն ունեն ներկայացնելու պահանջագրեր և անհրաժեշտ գրականության ցանկեր, ըստ որոնց և իրականացվում է գրքերի ձեռքբերումը: Հատկապես մեծ պահանջարկ ունեն արտասահմանյան գրականության առանձին հեղինակների աշխատությունները, որին նպաստում է նաև տվյալ գրքերի գովազդը տարբեր համացանցային, սոցիալական կայքերում:





Յուցանիշ 4.6. Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և դասախոսների թվին

Յուցանիշ 4.6	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Նոր աբոնենտների թիվը	220	212	210	231	234
Ընդհանուր աբոնենտների /ընթերցողների / թիվը	932	969	967	1001	1026
ԵՊՀ ԻՄ դասախոսների և ուսանողների թիվը	1404	1302	1265	1297	1263
Տարեկան աբոնենտներ /դասախոսներ և ուսանողներ հարաբերությունը	0.66	0.74	0.76	0.77	0.81

2020-25թթ. ընթացքում գրադարանի տարեկան աբոնենտների հաշվեկշիռը դասախոսների և ուսանողների թվի մեջ համեմատաբար կայուն է՝ մոտ 70-80%, որը պայմանավորված է ինչպես գրադարանային ֆոնդի հարստացմամբ և արդիականացմամբ, այնպես էլ համացանցին միացված համակարգիչների տեղադրմամբ:

Գրադարանի նոր աբոնենտների միջին թիվը վերջին 5 տարիների համար **221** է: Նոր աբոնենտների թվի ավելացումը պայմանավորված է շրջանավարտների և 1-ին կուրս ընդունված ուսանողների թվաքանակների տարբերությամբ, նաև դասախոսական կազմի կայունությամբ: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն ու հաճախ օգտվում են ԵՊՀ-ի անհամեմատ հարուստ գրադարանային պաշարներից, տանը ունեն համակարգիչներ և ինտերնետային կապ, որը հնարավորություն է տալիս օգտվել էլեկտրոնային տարբեր գրադարաններից, այդ թվում նաև Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարներից: Ուսանողներին հիմնականում բավարարում են նաև դասախոսների տրամադրած էլեկտրոնային նյութերը: Ուղղակի դասախոսները պետք է ավելացնեն ինքնուրույն և հետազոտական աշխատանքների շրջանակում նոր գրականության ցանկը:

Հատկապես կարևորենք ամբիոնային պահանջագրերի դերը, որը հնարավորություն է ընձեռում նկատել գրադարանում առկա կամ ձեռքբերման պահանջարկ ունեցող գրականությունը, իրականացնել մասնագիտական գրականության պաշարների՝ ուսանող/ գիրք հարաբերության հնարավոր համահարթեցում:

Հատկապես մեծ է էլեկտրոնային գրադարանի պահանջարկը, իսկ մեր էլեկտրոնային գրադարանի այցելությունների թիվը միջինում 878 այցելու / 10906 դիտում է (ամբողջական դիտումները մոտ 22,267,601 էջ՝ 17.07.2025 թվականի դրությամբ):



Յուցանիշ 4.7. Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ-ի ծախսերի հանրագումարում

Յուցանիշ 4.7	2020	2021	2022	2023	2024
Շահագործման ծախսերի ծավալը (հզ. դր.)	126000	133000	155200	160200	144187
Ընդհանուր ծախսերի ծավալը (հզ. դր.)	457625	493161	530579	572093	534027
Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը (%)	**27.53**	**26.97**	**29.25**	**28.00**	**27.00**

Շահագործման ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում համեմատաբար կայուն է:







Յուցանիշ 4.8. Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը

Յուցանիշ 4.8	2020	2021	2022	2023	2024
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	378	4199	2600	3730	3370
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1288	1186	1145	1182	1096
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	0.29	3.54	2.27	3.16	3.07

2021թ.ձեռքբերված սարքավորումների ծախսերը ամենաբարձրն է վերջին 5 տարիների համար և այն պայմանավորված է այդ տարում բավականին շատ սարքավորումներ ձեռք բերելով: Օրինակ, այդ ծախսերն ավելացել են՝ պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ: Նշված փոփոխություններն էլ հիմք են դարձել մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքի աճի համար: 2020թ. նվազել են սարքավորումների ձեռք բերման ծախսերը, կապված համավարակի հետ: 2021թ.-ին այդ ծախսերի տեսակարար կշիռը նորից աճել է, այսինքն, մասնաճյուղը ներդրումներ է կատարել նոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ, իսկ 2022թ.-ին այդ ուղղությամբ իրականացված ծախսերը 2021թ.-ի համեմատ նվազել են: Ծախսերի նվազելը կախված է վերջին տարիներին ուսանողական համակազմի նվազմամբ, ինչի արդյունքում նվազում են մասնաճյուղի ֆինանսական հնարավորությունները:2023թ սարքավորումների ձեռք բերման ծախսերն ավելացել են՝ կապված ուսանողական համակազմի ավելացման հետ, իսկ 2024թ նվազել են՝ կապված ուսանողական համակազմի նվազման հետ: 2024 թ. մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը կազմել է 3.07 հզ. դրամ, որը գրեթե նույնն է 2023 թ. ցուցանիշի՝ 3.16 հզ. դրամի հետ համեմատած: Թեև 2024 թ. ընդհանուր սարքավորումների ձեռք բերման ծախսերը որոշակիորեն նվազել են (3730 հզ. դրամից՝ 3370 հզ. դրամ), սակայն մեկ ուսանողին ընկնող ցուցանիշը մնացել է կայուն նախորդ տարվա համեմատ :





Ցուցանիշ 4.9. Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը

Ցուցանիշ 4.9	2020	2021	2022	2023	2024
Էներգիայի տարեկան ծախսը (հզ. դր.)	2747	3695	4843	**5028**	**5164**
Ուսանողների և աշխատակիցների միջին տարեկան թիվը	1557	1446	1392	**1440**	**1341**
Տեսակարար էներգածախսը (հզ. դր.)	**1.8**	**2.6**	**3.5**	**3.5**	**3.9**

Տարեկան էներգածախսը փոփոխական է՝ պայմանավորված հյուրանոցային համալիրում ջեռուցման տարբեր միջոցների կիրառմամբ, համակարգչային սրահների ավելացմամբ և վերազինմամբ, 2020թ. էներգածախսը նվազել է՝ կապված համավարակի պայմաններում դասապրոցեսի առցանց իրականացմամբ: 2021թ. էներգածախսը կրկին աճել է, բայց այն ջեռուցման համակարգերի նորացման հաշվին կայուն է: 2022-2023թթ.էներգածախսն ավելացել է խստաշունչ և երկարաձգված ձմեռվա պատճառով: Չնայած նրան, որ ուսանողների և աշխատակիցների միջին տարեկան թիվը 2024 թվականին նվազել է, մեկ մարդու հաշվով էներգածախսի ցուցանիշը նախորդ նախորդ 4 տարիների համեմատ հանդիսանում է ամենաբարձրը: Էներգածախսի աճը հիմնականում պայմանավորված է տնտեսական ու տեխնիկական գործոններով:





Յուցանիշ 4.10. Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.10	2020	2021	2022	2023	2024
Ջրամատակարարման և ջրահեռացման տարեկան ծախսը (հզ. դր.)	684	666	1314	1190	1223
Ուսանողների և դասախոսների միջին տարեկան թիվը	1557	1446	1265	1297	1320
Ջրի տեսակարար ծախսը (հզ. դր./մարդ)	**0.44**	**0.46**	**1.04**	**0.92**	**0.93**

2020-2021թթ.-ին ջրամատակարարման և ջրահեռացման տարեկան ծախսերը դիտարկվող ժամանակահատվածում մնացել են համեմատաբար ցածր: Սա պայմանավորված է COVID-19 համավարակի ընթացքում ուսումնական գործընթացի և վարչական աշխատանքների առցանց կամ մասամբ առցանց ձևով իրականացմամբ: 2022-24թթ. այն ավելացել է կապված մասնաճյուղում իրականացված մի շարք շինարարական աշխատանքների, ինչպես նաև ջրի սակագնի փոփոխության (ջրի 1խմ-ը 2021թ. եղել է 153 դրամ, իսկ 2022թ.-ին դարձել է 170 դրամ) և շուրջօրյա ջրամատակարարման հետ:





Յուցանիշ 4.11. Վերանորոգված, արդիականացված ենթակառուցվածքներ

Յուցանիշ 4.11	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ուսումնական և վարչական տարածքների արդիականացման ծրագրերի թիվ	15	14	15	10	14
Մասնաշենքերի հիմնանորոգման և վերա-կառուցման տարբերակված ծրագրերի թիվ	15	14	5	1	6
Օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման ծրագրեր	2	3	4	4	1
Վիրտուալ լաբորատորիաների թիվ	4	5	5	6	6
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	56	57	57	57	57
Արդիականացված լսարանների քանակ	5	14	19	32	12
Արդիականացված լսարանների հաշվեկշիռը (%)	8.9	24.6	33.3	56.1	21.1

2024/25 ուստարում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական և վարչական տարածքների արդիականացման, մասնաշենքերի վերանորոգման, օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման և լսարանների արդիականացման 14 ծրագրեր, արդիականացվել է 12 լսարան, որը կազմում է ընդհանուր լսարանային ֆոնդի շուրջ 21.1%-ը:



ԲՆԱԳԱՎԱՌ 5.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յուցանիշ 5.1.	Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.2.	Հիմնական դասախոս-ասպիրանտ քանակական հարաբերակցությունը
Յուցանիշ 5.3.	Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը
Յուցանիշ 5.4.	Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.5.	Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը, հաշվեկշիռը, համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը
Յուցանիշ 5.6.	Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.7.	Մասնաճյուղի էլեկտրոնային կայք էջը

Ցուցանիշ 5.1. Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը	10	11	12	9	3
Հիմնական դասախոսական կազմը	84	68	66	67	63
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների հաշվեկշիռը (%)	**11.9**	**16.2**	**18.2**	**13.4**	**4.8**

2021-22 և 2022-23 ուստարիներին հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների հաշվեկշռի բարձր ցուցանիշը պայմանավորված է 2021թ.-ից ԵՊՀ ԻՄ-ում գիտահետազոտական ներքին դրամաշնորհային մրցույթներ կազմակերպելու գործընթացով: 2021 և 2022 թվականներին իրականացվել են 5-ական ներքին դրամաշնորհային ծրագրեր: 2023-2024, 2024-2025 ուստարիներին հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թվի նվազումը պայմանավորված է 2 հանգամանքով՝ մրցույթում հաղթել են 2 հետազոտական թեմաներ (նախորդ 5 թեմայի փոխարեն) և նախագծերում պարտադիր է դարձել ուսանող - հետազոտողների ընդգրկումը, պահանջները խստացվել են և հստակեցվել:



Յուցանիշ 5.2. Հիմնական դասախոս-ասպիրանտ (հայցորդ) քանակական հարաբերակցությունը

Յուցանիշ 5.2	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական դասախոսական կազմ(առանց ԵՊՀ-ից համատեղ. հրավ. դասախ. կազմի)	63	68	66	67	63
Ասպիրանտներ /հայցորդներ/				3	4
Հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը				22.3	15.8

Այս թվերը ցույց են տալիս, որ մասնաճյուղի աշխատակազմից պարբերաբար շարունակում են իրենց կրթությունը, զբաղվում են գիտությամբ: Հետագայում նրանք լրացնում են մասնաճյուղի դասախոսական կազմը:



Ցուցանիշ 5.3. Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.3	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից համատեղ. հրավ. դասախ. կազմի)	63	68	66	67	63
Գիտական հրատարակությունների թիվը	31	50	60	37	40
Այդ թվում՝ մենագրություններ	2	2		1	0
ուսումնական ձեռնարկ կամ դասագիրք	1	4	4	3	0
գիտական հոդվածներ	28	42	56	33	40
զեկուցումների թեզիսներ	0	2		0	0
Գիտական հրատարակություններ/ դասախոսներ հարաբերակցությունը	**0.49**	**0.74**	**0.91**	**0.55**	**0.63**

2020-2021 ուստարում մեկ դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների թիվը կազմել է **0.49**, որը պայմանավորված է covid19-ով, Մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի ԲՈԿ-ի ցանկից դուրս մնալով (2017թ.-ին հրատարակվել է «Ակունք»-ի 2 համար, 2018թ.-ին՝ 4 համար, 2019թ.ին և 2020թ-ին՝ մեկական համար, իսկ 2021թ-ին ընդհանրապես չի հրատարակվել)։ 2021-2022 և 2022-2023 ուստարիների աճը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 28-ի 42/5 որոշմամբ հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի հաստատումով, որը բարելավվել է 2022թ. մարտի12-ի նիստի թիվ 58/4 որոշմամբ, ինչպես նաև և գիտական կոչումներով պայմանավորված աշխատավարձների տարբերության աճով։ Ակտիվությանը նպաստել են նաև ԵՊՀ ԻՄ-ում կազմակերպված միջազգային գիտագործնական 2 համաժողովները՝ 2022թ.-ին և 2023թ.-ին։ Հետազոտական գործունեության վրա ազդեցություն են ունեցել նաև 2021թ.-ից պարբերաբար կազմակերպվող ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային մրցույթները։ Վերոհիշյալ գործողությունների արդյունքների միտումը համահունչ է ԵՊՀ ԻՄ պահանջմունքներին, սակայն կարիք կա դրամաշնորհներին տրվող դրամական միջոցների ավելացման, ինչպես նաև մրցույթին առավել գործնական թեմաների ընդգրկման մեխանիզմների հստակեցման։ Անհրաժեշտություն կա նաև հավելավճարների կարգում տրվող գումարները լինեն մեծ կամ հավասար ԵՊՀ-ում տրվող հավելավճարներից։ Անհրաժեշտ է նաև ունենալ Մասնաճյուղի հետազոտական աշխատանքները համակարգող կառույց։

2023-2024 ուստարվա արդյունքների քանակական նվազումը պայմանավորված է աշխատանքների որակի բարձրացմամբ՝ հաշվեկշռում ավելացել են միջազգային վարկանիշային պարբերականներում հրապարակումների թիվը ինչպես նաև ՀՀ բոկի ցանկում ընդգրկված պարբերականներում հրապարակումների թիվը, իսկ 2024-2025 ուստարվա քանակական աճը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Մասնաճյուղում 2024-2025թթ. անցկացվել են «Գիտաչափական հոդվածների հրապարակման աշխուժացում» թեմայով դաս-քննարկումներ և «Առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններ և դրանցում ընդգրկված ամսագրերում տպագրվելու ընթացքը և պահանջները» թեմայով վերապատրաստումների շարքը, որը վարել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու խմբագիր Աշոտ Արամայիսի Գևորգյանը։





Յուցանիշ 5.4. Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.4	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր հրատարակությունների թիվը	31	50	60	37	40
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը	0	0	9	4	6
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների հաշվեկշիռը (%)	0.0	0.0	15.0	10.8	15.0

Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թվի բացակայությունը (2020-2022թթ.) պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի հիմնական դասախոսական կազմից արտերկիր գործուղումների բացակայությամբ, միջազգային կոնֆերանսների մասնակցության բացակայությամբ, որը հետևանք է նաև ԵՊՀ-ի համապատասխան բաժնի հետ ոչ բավարար համագործակցությամբ: 2022-2023թթ. հաշվեկշիռը կազմել է 15.0% , որը պայմանավորված է Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի խորհրդական Ս.Մինասյանի նախաձեռնությամբ ԵՊՀ ԻՄ–ում կազմակերպված «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» միջազգային գիտագործնական համաժողովներով, որոնցից առաջինը կայացել է 2022թ.-ի մարտին, երկրորդը՝ 2023թ.-ի ապրիլին, նաև ԵՊՀ ԻՄ միջազգային համագործակցության ակտիվությամբ: 2023-24թթ.-ին այն կազմել է՝ 10.8:
2024-2025 ուստարվա աճը նույնպես պայմանավորված է ԵՊՀ ԻՄ միջազգային համագործակցության ակտիվությամբ:





Յուցանիշ 5.5. Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը և հաշվեկշիռը, համակարգիչների թիվ-մասնակից հարաբերակցությունը

Յուցանիշ 5.5	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը	0	5	5	**5**	5
Համակարգիչների ընդհանուր թիվը	191	187	187	192	196
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը (%)	**0**	**2.7**	**2.7**	**2.6**	**2.6**
Հետազոտական նախագծերում ընդգրկված մասնակիցների թիվը. Այդ թվում՝	14	21	17	12	5
դասախոսներ	10	11	12	9	3
ուսանողներ		10	5	4	2
Համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը	**0.00**	**0.24**	**0.29**	**0.38**	**1.00**

Մինչև 2020-2021 ուստարին Մասնաճյուղում հետազոտական նախագծեր չեն իրականացվել, հետևաբար մինչ այդ ընդգրկված մասնակիցներ չկան, և համակարգիչներ այդ նպատակով չեն օգտագործվել: 2020թ.-ից «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում հայտարարվել են ներքին դրամաշնորհային մրցույթներ և 2021 ու 2022 թվականներին իրականացվել են 5-ական ներքին դրամաշնորհային ծրագրեր:

Ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտական նախագծերում ընդգրկված ուսանողների թիվը 2022-2023 և 2023-2024 ուստարիներին նվազել է, չնայած այն հանգամանքին, որ ներքին հետազոտական նախագծերում պարտադիր պայման է ուսանողի առկայությունը: 2023-2024 և 2024-2025 ուստարիների դասախոսների թվի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պայմանների հստակեցման արդյունքում մրցույթում ֆինանսավորում են ստացել 2-ական դրամաշնորհային ծրագրեր, նախորդ 5 ծրագրերի փոխարեն՝ ըստ մրցույթի մասնակիցների հատկացվող դրամական միջոցները բավարար չեն պահանջվող որակի հետազոտական աշխատանքների կատարման համար, անհրաժեշտ է պահանջների հետ զուգահեռ մեծացնել նաև դրամական միջոցները:

Ցուցանիշ 5.6. Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.6	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը	4	5	5	5	5
Ինտերնետային կապի կետերի ընդհանուր թիվը	191	187	187	192	196
Հաշվեկշիռը (%)	2.1	2.7	2.7	2.6	2.6

Այս տվյալները վկայում են, որ որ 2021/22–2024/25 ուսումնական տարիներին գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը հարաբերականորեն կայուն է, ինչը ենթադրում է, որ մասնաճյուղում ապահովված է գիտահետազոտական աշխատանքների և ուսումնական գործընթացների համար անհրաժեշտ տեխնիկական հարթակների շարունակական հասանելիություն: Միաժամանակ նկատելի է, որ ընդհանուր ինտերնետային կապի կետերի քանակն աճել է (187-ից մինչև 196), մինչդեռ գիտության համակարգի համար նախատեսված կապի կետերի թիվը նույնն է մնացել (5), ինչի արդյունքում հաշվեկշռային ցուցանիշը պահպանվել է:



Ցուցանիշ 5.7. Մասնաճյուղի էլեկտրոնային կայքէջը

Ցուցանիշ 5.7	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Մասնաճյուղի կայքի տարեկան այցելությունների թիվը	293.056	253290	235800	135000	0
Էլեկտրոնային գրադարանի այցելությունների թիվը	204285	662160	1324310	1800668	1872149
Առկա էլեկտրոնային ուսումնական նյութերի թիվը	1012	1034	1113	1146	1214

2023-2024 ուստարում մասնաճյուղի կայքի տարեկան այցելությունների թվի նվազումը պայմանավորված է մասնաճյուղում տեղեկատվության տարածման այլ աղբյուրների ակտիվացմամբ՝ Moodle, համալսարանական էլ. հասցեներ, ֆեյսբուք սոցիալական ցանց: 2024 թվականի սեպտեմբերից մեկնարկել է մասնաճյուղի նոր կայքը, որն ունի ավելի գրավիչ տեսք և համալրված է ավելի մեծաքանակ ինֆորմացիայով՝ ապահովելով օգտվողների համար հարմարավետ և արդյունավետ տեղեկատվական միջավայր:

2024–2025 ուստարվա համար մասնաճյուղի կայքի տարեկան այցելությունների վերաբերյալ տվյալները դեռևս հաշվառված չեն՝ կապված 2024 թվականի սեպտեմբերին գործարկված նոր կայքի վիճակագրական համակարգի փորձնական փուլում գտնվելու հետ:

Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի այցելությունների բարձր ցուցանիշը պայմանավորված է մասնագիտական մեծաքանակ գրականության բաց հասանելիությամբ և Google որոնման հարթակում մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի բարձր տեսանելիությամբ:

Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանը մշտապես համալրվում է մասնագիտական արդի գրականությամբ՝ 2024-2025 ուստարվա ընթացքում գրադարանի հարթակում ավելացվել է 68 նոր գիրք, ինչը նպաստել է գրադարանի տեղեկատվական ներուժի և օգտվողների ակտիվության ավելացմանը:







ԲՆԱԳԱՎԱՌ 6.	ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Յուցանիշ 6.1.	Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում
Յուցանիշ 6.1.1	Դասախոսների ներգրավվածությունը ներքին նախագծերում և ծրագրերում
Յուցանիշ 6.1.2	ՈՒսանողների ներգրավվածությունը գիտական նաղագծերում և ծրագրերում
Յուցանիշ 6.2.	Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը
Յուցանիշ 6.3.	Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը
Յուցանիշ 6.4.	Բուհ-գործատու համագործակցությունը
Յուցանիշ 6.5.	Միջազգային համագործակցություն

Ցուցանիշ 6.1. Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում և ծրագրերում

Ցուցանիշ 6.1	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների թիվը	0	1	1	**2**	2
Միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների թիվը		1	1	**2**	0
Հիմնական **դասախոսական** կազմը(առանց ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների)	63	68	66	**67**	63
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	**0.0**	**1.5**	**1.5**	**3.0**	**3.2**
Միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)		**1.5**	**1.5**	**3.0**	**0.0**

Մասնաճյուղում 2021-2022 ուստարվա միջազգային դրամաշնորհային ծրագրում ներգրավված է 1 մասնակից, ինչը պայմանավորված է Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կողմից SS ոլորտում շահած միջազգային դրամաշնորհի առկայությամբ, որում ընդգրկվել են 1 դասախոս և 5 ուսանող:

Այս ցուցանիշները բարելավելու համար ԵՊՀ ԻՄ-ում 2021-2022 և 2022-2023 ուստարիներին կազմակերպվել է միջազգային գիտագործնական համաժողովներ և ներքին դրամաշնորհային մրցույթներ:

2023-2024 և 2024-2025 ուստարիներին միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավվել է 2-ական դասախոսներ, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ միջազգայն գործունեության ակտիվացմամբ:

:





Ցուցանիշ 6.1.1. Դասախոսների ներգրավվածությունը ներքին նախագծերում և ծրագրերում

Ցուցանիշ 6.1.1.	2021/22	2022/23	2023/24	2024/25
Գիտահետազոտական նախագծերում ներգրավված դասախոսների թիվը	11	12	9	3
Այդ թվում՝ երիտասարդ դասախոսներ	6	3	4	0
Ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների թիվը	11	12	6	3
Գիտահետազոտական ինստիտուտների հետ իրականացվող ներքին դրամաշնորհային ծրագրերում (ԳՀԻ/ԴՇԾ) ներգրավված դասախոսների թիվը	0	0	0	0
Հիմնական **դասախոսական** կազմը(առանց ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների)	68	66	67	63
Գիտահետազոտական նախագծերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	16.2	18.2%	13.4%	4.8%
Գիտահետազոտական նախագծերում ներգրավված երիտասարդ դասախոսների հաշվեկշիռը (%)	8.8	4.5%	6.0%	0.0%
Ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	16.2	18.2%	9.0%	4.8%
ԳՀԻ/ԴՇԾ-ում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	0.0	0.0%	0.0%	0.0%

2021-2022 և 2022-2023 ուստարիներին հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թվի աճը պայմանավորված է 2021թ.-ից մասնաճյուղում պարբերաբար կազմակերպվող ներքին դրամաշնորհային մրցույթներով /յուրաքանչյուր ուստարում մեկ մրցույթ/:

Իսկ 2023-2024 և 2024-2025 ուստարիների ցուցանիշների նվազումը պայմանավորված է ներքին թեմատիկ հետազոտական մրցույթին ներկայացվող պահանջների հստակեցմամբ, որի արդյունքում ֆինանսավորում են ստացել 2 թեմա, նախորդ 2 տարիներին հաստատված 5 - ական թեմաների փոխարեն:



Յուցանիշ 6.1.2. Ուսանողների ներգրավվածությունը գիտական նախագծերում և ծրագրերում

Յուցանիշ 6.1.2.	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Գիտահետազոտական նախագծերում ներգրավված ուսանողների թիվը		**10**	5	2	3
Ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ուսանողների թիվը		10	5	2	3
Գիտահետազոտական ինստիտուտների հետ իրականացվող ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ուսանողների թիվը		0	0	0	0
Հիմնական **ուսանողական** կազմը	1288	**1186**	**1145**	**1182**	**1096**
Գիտահետազոտական նախագծերում ներգրավված ուսանողների հաշվեկշիռը (%)		**0.84**	**0.44%**	**0.17%**	**0.27%**
Ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)		**0.84**	**0.44%**	**0.17%**	**0.27%**
ԳՀԻ/ԴՇԾ-ում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)		**0.00**	**0.00%**	**0.00%**	**0.00%**

2021-2022 և 2022-2023 ուստարիներին հետազոտական նախագծերում ընդգրկված ուսանողների թվի աճը պայմանավորված է 2021թ.-ից պարբերաբար /յուրաքանչյուր ուստարում մեկ մրցույթ/ կազմակերպվող ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային մրցույթներով՝ 2022թ.-ից սկսած յուրաքանչյուր թեմայում պարտադիր ընդգրկվում է առնվազն մեկ ուսանող:

2023-2024 և 2024-2025 ուստարիների ցուցանիշների նվազումը պայմանավորված է ներքին թեմատիկ հետազոտական մրցույթին ներկայացվող պահանջների հստակեցմամբ՝ որի արդյունքում ֆինանսավորում են ստացել 2 թեմա, նախորդ 2 տարիներին հաստատված 5 - ական թեմաների փոխարեն:



Յուցանիշ 6.2. Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը

Յուցանիշ 6.2	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Համալսարանական պարբերականներ	2	2	2	2	2

Համալսարանում պարբերաբար հրատարակվել են «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշներ»-ը և «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության տարեկան հաշվետվություն»-ը: 2020/21 ուստարուց «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն չի հրատարակվում, ուստի վերջին 4 ուստարիներին համալսարանական պարբերականների թիվը 2 է:



Յուցանիշ 6.3. Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Յուցանիշ 6.3	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների և նյութերի թիվը. այդ թվում՝	**7**	**6**	**3**	**2**	**2**
դիմորդի ուղեցույց	1	1	1	1	1
բուկլետներ (տարբեր լեզուներով)	2	1	2	1	1
Կրթական ծրագրեր Այդ թվում՝		**21**	**21**	**22**	**19**
Բակալավրի կրթական ծրագրեր	16	20	20	20	17
Մագիստրոսի կրթական ծրագրեր	1	1	1	2	2

Հանրությանը տրամադրվող տեղեկատ-վական հրատարակությունների թիվը պակասել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դադարեցվել է Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքերի հրատարակումը (2022/23 ուստարում դրանց թիվը 0 է:)

ԵՊՀ ԻՄ-ում հրատարակվում և պաշտոնական կայքում տեղադրվում են հայերեն և օտարալեզու գովազդային բուկլետներ (http://ijevan.ysu.am/education/applicants/booklets/): Մինչև այսօր հրատարակված բուկլետների ընդհանուր թիվը 14 է:

Կազմվում և պաշտոնական կայքում հրապարակվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:

Յուցանիշ 6.4. Դպրոց-Բուհ-գործատու համագործակցությունը

Յուցանիշ 6.4	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի և միջոցառումների թիվը. այդ թվում՝	**6**	**7**	**59**	**106**	**111**
առարկայական օլիմպիադաներ և մրցույթներ		1	1	1	1
ինտելեկտուալ խաղեր		0	1	5	2
ակնարկային և թեմատիկ դասախոսություններ		1	3	26	22
մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ և կարիերայի պլանավորման իրականացված խորհրդատվություններ		0	46	65	65
«Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր		5	8	8	21
կազմակերպված կրթական ցուցահանդեսներ		0	0	1	0
կազմակերպված ամառային դպրոցներ		0	0	0	0
նախապատրաստական առկա և/կամ առցանց դասընթացներ		0	0	0	0
Բուհ-գործատու համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրերի թիվը. այդ թվում՝	**31**	**39**	**36**	**36**	**45**
ուսումնական պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր	6	9	8	8	8
մասնագիտական պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր	25	26	24	24	33
Քոլեջների հետ կնքված պայմանագրեր		4	4	4	4
Ընդամենը	**37**	**46**	**95**	**142**	**156**

Ուսումնական և մասնագիտական պրակտիկաների կազմակերպման համար մասնաճյուղը 2024/2025 ուստարվա ընթացքում ունեցել է 45 պայմանագիր:

Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում 2024/2025 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ իրականացվել է 21 ճանաչողական այց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, մասնաճյուղի աշխատակիցների կողմից Տավուշի և Գեղարքունիքի մարզերի դպրոցներում 65 հանդիպումներ և «ԵՊՀ օլիմպիադա-2025»-ի մարզային փուլը:

«Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության», «Օտար լեզուների», «Հայոց լեզվի և գրականության», «Պատմության», «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության», «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնների դասախոսների կողմից կազմակերպվել են 22 ակնարկային դասախոսություններ մարզի ութ դպրոցներում:

Յուցանիշ 6.5. Միջազգային համագործակցություն

Յուցանիշ 6.5	2021/22	2022/23	2023/24	2024/25
Օտարալեզու դասընթաց պարունակող կրթական ծրագրերի թիվը				
Օտարալեզու դասընթաց պարունակող կրթական ծրագրերի հաշվեկշիռը ծրագրերի ընդհանուր թվում (%)				
Օտարերկրյա համալսարանների կամ կազմակերպությունների հետ համագործակցությունների թիվ	3	6	6	4

2024-25 ուստարվա ընթացքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը համագործակցության հուշագրեր է կնքել Սմոլենսկի պետական համալսարանի (24.12.2024), Ռուսաստանի առաջին նախագահ Բ. Ն. Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանի (01.04.2025), Լ. Ն. Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի (10.04.2025) և «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության (18.09.2024) հետ:

ԲՆԱԳԱՎԱՌ 7.	ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
Յուցանիշ 7.1.	Կրթական ծրագրերի որակի ապահովում
Յուցանիշ 7.2.	Ուսումնական գործընթացի որակի ապահովում (մասնակցություն շարժունության ծրագրերի)
Յուցանիշ 7.3.	Կրթական ծրագրերի որակից ներքին և արտաքին շահակիցների բավարվածության գնահատում

Յուցանիշ 7.1. Կրթական ծրագրերի որակի ապահովում

Յուցանիշ 7.1	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) ենթարկված կրթական ծրագրերի թիվը	4	3	5	0
Ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) ենթարկված կրթական ծրագրերի հաշվեկշիռը ծրագրերի ընդհանուր թվում (%)	**18.2%**	**14.3**	**22.7**	**0.0%**
Ծրագրային հավատարմագրում անցած կրթական ծրագրերի թիվը				
Ծրագրային հավատարմագրում անցած կրթական ծրագրերի հաշվեկշիռը կրթական ծրագրերի ընդհանուր թվում				
ՀՀ բուհերի հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի թիվը				

2023-24 ուսումնական տարվա ընթացքում Մասնաճյուղի բակալավրի 20 և մագիստրատուրայի 2 կրթական ծրագրերից մշտադիտարկում են անցել բակալավրի 5 կրթական ծրագրեր. «Պատմություն», «Անգլ. լեզու և գրականություն», «Ֆր.լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժ. և մեթոդ.», «Հոգեբանություն»:

2024-25թթ. ուստարում ծրագրային հավատարմագրման համար պատրաստ կրթական ծրագրեր չեն եղել, բայց մասնաճյուղն արդեն նախապատրաստական աշխատանքներ է իրականացրել այդ գործընթացը վերսկսելու համար:

2026 թվականին ԵՊՀ ԻՄ-ում գործող 19 (բակալավրի 17՝ առկա 12, հեռակա 5 և մագիստրոսական՝ 2) կրթական ծրագրերի համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ՝ ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի:



Ցուցանիշ 7.2. Ուսումնական գործընթացի որակի ապահովում (մասնակցություն շարժունության ծրագրերի)

Ցուցանիշ 7.2	2021/22	2022/23	2023/24	2024/25
Շարժունության ծրագրերում ներգրավված ուսանողների թիվը		0	0	0
Շարժունության ծրագրերում ներգրավված ուսանողների հաշվեկշիռն ուսանողների համակազմում (%)				
Շարժունության ծրագրերում ներգրավված հիմնական դասախոսների թիվը		1	0	0
Շարժունության ծրագրերում ներգրավված հիմնական դասախոսների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում (%)				
Վիրտուալ շարժունության ծրագրերում ներգրավված ուսանողների թիվը		0	0	0
Վիրտուալ շարժունության ծրագրերում ներգրավված ուսանողների հաշվեկշիռն ուսանողների համակազմում (%)				
Վիրտուալ շարժունության ծրագրերում ներգրավված հիմնական դասախոսների թիվը		0	0	0
Վիրտուալ շարժունության ծրագրերում ներգրավված հիմնական դասախոսների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում (%)				

2022/2023 ուստարվա ընթացքում շարժունության ծրագրերում «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրից ներգրավված է եղել մեկ դասախոս:

Յուցանիշ 7.3. Կրթական ծրագրերի որակից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության գնահատում

Յուցանիշ 7.3	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից	4.2	4.5	4.4	4.4	4.4
Արտաքին շահակիցների բավարարվածությունը շրջանավարտներից		4.0	4.0	4.2	4.2
Արտաքին շահակիցների բավարարվածությունը պրակտիկանտ ուսանողներից. -մասնագիտական պրակտիկա անցնող ուսանողների համար -մանկավարժական պրակտիկա անցնող ուսանողների համար			 4.5 4.57	 4.7 4.65	 4.6 4.8

Մասնաճյուղի ԿԲՈԱ և ՊԿՇՀ բաժինները պարբերաբար տարբեր մեխանիզներով իրականացնում են մի շարք գործընթացներից մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններ: Այս ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն են տալիս գնահատել այդ գործընթացներից շահակիցների բավարարվածության մակարդակը, վեր հանել շահակիցների կարիքներն ու խնդիրները, որոնց լուծումներն ուղղորդվում են այդ գործընթացների բարելավմանը:

Այդ արդյունքների դիտարկումը մի քանի տարիների կտրվածքով հնարավորություն է տալիս գնահատել առաջընթացը և պլանավորել գործունեությունը:

Մասնաճյուղի շրջանավարտները բավարարված են ստացած կրթությունից՝ միջին գնահատականը ձգտում է **4.4-ի:** Արտաքին շահակիցների բավարարվածությունը մասնաճյուղի շրջանավարտներից շատ բարձր չէ, սակայն մասնաճյուղի շրջանավարտները պահանջված են մարզի աշխատաշուկայում՝ ինչի մասին գործատուները գրում են բաց հարցերում:

Վերջին տարիներին պրակտիկաների ծրագրերում կատարված փոփոխությունների և գործատու կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության արդյունքում (ցուցանիշ՝ 6.4) բարելավվել է պրակտիկաների իրականացման որակը և ուսանողները բավարարված են պրակտիկաների իրականացումից և պրակտիկայի ընթացքում ձեռք բերած մասնագիտական կարողություններից:

ԲՆԱԳԱՎԱՌ 8.	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Յուցանիշ 8.1.	Համագործակցություն
Յուցանիշ 8.2.	Լրացուցիչ կրթական ծրագրեր, լրացուցիչ կրթական ծառայություններ, ոչ ֆորմալ կրթության ապահովում

Յուցանիշ 8.1. Համագործակցություն

Յուցանիշ 8.1	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ոլորտային կազմակերպությունների հետ կնքված հուշագրերի քանակը	4	6	4	6
Գործատուների հետ կնքված պայմանագրերի քանակը	22	30	32	34
Մագիստրոսական ծրագիր իրականացնող գիտահետազոտական ինստիտուտի հետ կնքած համագործակցության հուշագրերի քանակ				
Բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ կնքված համագործակցության պայմանագրերի(համաձայնագիր, հուշագիր) քանակ	11	14	16	19

2024-25 ուստարվա ընթացքում Մասնաճյուղը համագործակցության հուշագրեր է կնքել Սմոլենսկի պետական համալսարանի (24.12.2024թ.), Ռուսաստանի առաջին նախագահ Բ.Ն. Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանի (01.04.2025թ.), Լ.Ն. Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի (10.04.2025թ.), «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հետ (09.07.2025թ.):

Հուշագրեր են կնքվել Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում միության (18.09.2024թ.), Իջևան համայնքի (21.03.2025թ.), «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ի (02.05.2025թ.), «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ (19.06.2025թ.):

Գործատուների և ոլորտային կազմակերպությունների միջև պայմանագրեր են կնքվել մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների անցկացման համար:

Ցուցանիշ 8.2. Լրացուցիչ կրթական ծրագրեր, լրացուցիչ կրթական ծառայություններ, ոչ ֆորմալ կրթության ապահովում

Ցուցանիշ 8.2	2021/22	2022/23	2023/24	2024/25
Աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրերի թիվը	0	0	0	0